Եկեք սովորենք երեխայի իրավունքները

Ուղեցույց ուսուցիչների համար

Եկեք սովորենք երեխայի իրավունքները

Ուղեցույց ուսուցիչների համար

Երևան, 2021

«Եկեք սովորենք երեխայի իրավունքները» վերտառությամբ ուղեցույցը մշակվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի) երեխաների իրավունքների պաշտպանության համատեղ ծրագրի շրջանակում:

Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 5-ի թիվ 292-Ա/2 հրամանի՝ սույն ուղեցույցը երաշխավորված է որպես ուսումնական նյութ՝ դպրոցներում օգտագործման համար:

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը: ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է, որպեսզի Հայաստանում յուրաքանչյուր երեխա լինի սիրված, սնված և խնամված: Հիմնվելով 75-ամյա միջազգային փորձի և Հայաստանի երեխաների համար 25 տարվա հաջողությունների վրա՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը պարտավորություն է ստանձնում բարելավելու ամենախոցելի՝ աղքատության և մեկուսացման մեջ ապրող երեխաների կյանքը:

Ստեղծման պահից ի վեր՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ն ամբողջությամբ ֆինանսավորվում է անհատների, մասնավոր հատվածի, հիմնադրամների և կառավարությունների կամավոր նվիրատվություններով:

Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեությանը ծանոթանալու համար այցելեք **www.unicef.am** և **www.babycef.am** կայքերը:

Կազմի լուսանկարը՝ ©UNICEF Armenia/2021/ Margaryan

Բովանդակություն

Ուղերձ ուսուցիչներին **7**

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան. հաստատության պատմությունը 11

ՅՈՒՆԻՍԵՖ. կազմակերպության պատմությունը 12

1. Երեխայի իրավունքներ. ինչու՞ է երեխայի իրավունքների ուսումնասիրությունը կարևոր և ի՞նչ ամրագրում են դրանք ստացել միջազգային փաստաթղթերում **15**

2. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա. ընդհանուր բնութագիր **17**

3. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա. հիմնական սկզբունքները **21**

3.1. Առանց խտրականության 22

3.2. Երեխայի լավագույն շահերը 25

3.3. Լսված լինելու իրավունք 29

4. Երեխայի պաշտպանությունը **34**

5. Երեխայի իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը **37**

6. Երեխայի իրավունքների պաշտպանության համակարգը Հայաստանի Հանրապետությունում **38**

6.1. Ազգային մակարդակ 39

6.2. Մարզային մակարդակ 40

6.3. Համայնքային մակարդակ 42

7. Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի մշտադիտարկումը **46**

Կարևոր հեռախոսահամարներ **50**

©RA Human Rights Defender's Office

Սիրելի՛ ուսուցիչներ

Երեխաները, հաշվի առնելով նրանց տարիքային և զարգացման առանձնահատկությունները, առավել խոցելի են իրենց իրավունքների պաշտպանության տեսանկյունից, հետևաբար երեխաների իրավունքները պետք է լինեն առանձնահատուկ ուշադրության ներքո:

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթ ուղղություններից է: Երեխաները պետք է լինեն յուրաքանչյուրիս առանձնահատուկ հոգածության ներքո:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն:

Երեխաներին անհրաժեշտ է իրազեկել իրենց իրավունքների և այդ իրավունքների իրականացման հնարավորությունների մասին. այդ դեպքում երեխաները կկարողանան պատշաճ իրացնել իրենց իրավունքները, չխախտել և պաշտպանել այլ երեխաների իրավունքները, ինչպես նաև լինել իրավագիտակից ու սեփական վարքագծի նկատմամբ պատասխանատու քաղաքացիներ: Այդ գործում անչափ կարևոր է նաև Ձեր՝ ուսուցիչների մասնակցությունը, քանի որ երեխաների՝ որպես անհատականությունների կայացման գործում անգնահատելի է ուսուցչի դերը:

Կարևոր է նաև երեխաների իրավունքների վերաբերյալ ուսուցիչների պատշաճ տեղեկացվածությունը: Հենց այս նպատակն ունի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՅՈՒՆԻՍԵՖի համագործակցության արդյունքում ստեղծված «Եկեք սովորենք երեխայի իրավունքները» ուղեցույցը, որի միջոցով ուսուցիչները կարող են իրազեկվել երեխաների հիմնարար իրավունքների մասին, ինչպես նաև ստացած տեղեկությունները փոխանցել աշակերտներին: Դպրոցն այն հիմնական վայրերից է, որտեղ երեխան պետք է ձեռք բերի իր իրավունքների վերաբերյալ գիտելիքներ և որտեղ երեխայի իրավունքները պետք է լինեն առավելագույնս պաշտպանված:

Ուղեցույցում ներկայացված են երեխաների իրավունքներին առնչվող հաճախ հանդիպող իրավիճակներ և հարց ու պատասխանի, քննարկումների միջոցով հնարավորություն է ստեղծված սովորել երեխաների իրավունքները, ինչպես նաև գտնել երեխաների լավագույն շահերից բխող լուծումներ ներկայացված իրավիճակների համար:

Հուսով եմ, որ ուղեցույցը կծառայի իր նպատակին և կդառնա արդյունավետ միջոց՝ երեխաների իրավունքների վերաբերյալ ուսուցիչների ու երեխաների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար: Նշվածը նաև կնպաստի երեխաների իրավունքների հնարավոր խախտումները կանխարգելելուն և հետագայում բացառելուն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

Արման Թաթոյան

Մատաղ սերնդի դաստիարակությունը, երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանությունը մշտապես եղել են քաղաքակիրթ պետությունների ուշադրության կենտրոնում: Եվ պատահական չէ, որ այս կարևոր գործընթացը պարբերաբար իր վավերացումն է ստացել միջազգային իրավական փաստաթղթերում:

Երեխաների կրթության, դաստիարակության, առողջության, մասնակցության լիարժեք ու ներդաշնակ զարգացումն ապահովելու հարցերը մեր պետության ու հասարակության մշտական ուշադրության ներքո են: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՅՈՒՆԻՍԵՖի համագործակցության արդյունքում ստեղծված և ձեզ ներկայացվող «Եկենք սովորենք երեխայի իրավունքները» ուղեցույցն օգտակար ձեռնարկ է նոր սերնդի դաստիարակությամբ զբաղվող մանկավարժների և նրանց ծնողների համար: Դրանում տեղ գտած դրույթների ճիշտ կիրառումը երեխաներին կազատեն բարդույթներից, կօգնեն նրանց ձևավորվել ու դրսևորվել որպես հասարակության լիարժեք անդամ: Այս գործում հիմնականում անելիքը ծնողներինն ու մանկավարժներինն է, և պետք է նշել, որ անչափ առաջնային ու կարևոր է առաջնորդվել երեխայի իրավունքներով ու շահերով:

Հատկապես կարևոր է ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների իրավունքների իրացումն ու շահերի պաշտպանությունը՝ բացառելով այդ գործընթացում որևէ խտրական մոտեցման դրսևորում:

Երեխաների դաստիարակության և նրանց պաշտպանվածության ապահովման կարևոր երաշխիքներից է ծնողների և մանկավարժների իրազեկվածությունը: Այս ուղեցույցի կիրառումը հնարավորություն կտա զարգացնել ձեր մասնագիտական հմտություններն ու կարողությունները, բացի այդ, ցանկալի արդյունքներ արձանագրել երեխաների իրավունքների պաշտպանության, երաշխավորման և իրականացման աշխատանքում:

Ողջունում եմ երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին նվիրված այս ուղեցույցի հրատարակման նախաձեռնությունը և համոզված եմ, որ այն երեխաների հետ տարվող աշխատանքներում կունենա գործնական նշանակություն և կնպաստի նրանց իրավունքների ու շահերի պաշտպանության կարևոր գործին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարար

Վահրամ Դումանյան

©UNICEF Armenıa/2021/Maharı

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան. հաստատության պատմությունը

2003 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը (ուժը կորցրած է ճանաչվել 04.02.2017 թ.-ին), և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը սկսել է իր գործունեությունն իրականացնել 2004 թվականից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հիմնադրումը Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և ազատությունների կանոնակարգված պաշտպանության ապահովմանն ուղղված նշանակալից քայլ էր:

2005 թվականի նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած հանրաքվեով կատարված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում առանձին հոդվածներով նախատեսվեցին Մարդու իրավունքների պաշտպանի վերաբերյալ կարգավորումներ:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած հանրաքվեով կատարված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում առանձին գլուխ նվիրվեց Մարդու իրավունքների պաշտպանին: Այն սահմանեց Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները, լիազորությունները, ընտրության կարգը և գործունեության երաշխիքները:

Սահմանադրական փոփոխությունների հիման վրա 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը:

«Մարդու իրավունքների պաշտպանի» մասին ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «...Պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ սույն օրենքով [խոսքը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի մասին է] սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը»: Օրենքով սահմանվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի լիազորություններն ու գործունեության կարգը:

Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը՝ որպես Օմբուդսմանի և մարդու իրավունքների ազգային և ամենաբարձր «A» միջազգային կարգավիճակ ունեցող հաստատություն, գործում է Փարիզյան և միջազգային սկզբունքներին համապատասխան:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները երեխաների իրավունքների պաշտպանության հարցում

«Մարդու իրավունքների պաշտպանի» մասին ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն:

«Մարդու իրավունքների պաշտպանի» մասին ՀՀ սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները երեխաների պաշտպանության ոլորտում: Պաշտպանն իրավասու է՝

- իրականացնելու օրենսդրության՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանության մշտադիտարկումը.
- իրականացնելու պարբերական, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության անարգել այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև՝ հանրակրթական ուսումնական հաստատություններ: Պաշտպանը պարտավոր չէ նախապես տեղեկացնել այցելությունների ժամանակի և նպատակի մասին.
- հանդես գալու երեխայի իրավունքներին առնչվող հատուկ հրապարակային զեկույցներով.
- իրավասու մարմիններ ներկայացնելու երեխաների իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ և իրականացնելու այլ լիազորություններ:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների պատշաճ և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2016 թվականից գործում է երեխաների իրավունքների պաշտպանության բաժին:

Երեխաները կարող են անձամբ կամ իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով բողոք ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաև ստանալ խորհրդատվություն իրենց իրավունքների վերաբերյալ:

ՅՈՒՆԻՍԵՖ. կազմակերպության պատմությունը

ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ) ՄԱԿ-ի հովանու ներքո գործող միջազգային կազմակերպություն է, որի առաքելությունն է ամենուրեք պաշտպանել յուրաքանչյուր, հատկապես առավել խոցելի երեխաների իրավունքները:

ՅՈՒՆԻՍԵՖ-ն առաջնորդվում է ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով և ձգտում է հաստատելու երեխայի իրավունքները որպես կայուն բարոյական սկզբունքներ և սահմանելու երեխաների նկատմամբ վարքագծի միջազգային ստանդարտներ:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը գործում է շուրջ 190 երկրներում ու տարածքներում:

1946 թվականից սկսած՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է երեխաների հետ, պաշտպանում և խթանում նրանց իրավունքներն ամբողջ աշխարհում: Այսօր ՅՈՒՆԻՍԵՖ-ն ունի յուրահատուկ կարգավիճակ երեխայի իրավունքների պաշտպանության գործում՝ ապահովելով «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջների կատարման մշտադիտարկումն ու վերահսկողությունը:

Օգտակար հղումներ

ՅՈՒՆԻՍԵՖ
www.unicef.am

ՅՈՒՆԻՍԵՖ-ը՝

- աջակցում է կառավարություններին՝ իրագործելու «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթները օրենքների և քաղաքականության իրականացման միջոցով, ներառյալ՝ զարգացնելով ինստիտուցիոնալ և մասնագիտական համապատասխան կարողությունները.
- մասնակցում է մշտադիտարկման գործընթացի փուլերին՝ անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելով կառավարություններին երեխաների պաշտպանության հարցերով կարևոր զեկույցները նախապատրաստելուց առաջ.
- աջակցում է Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեին, մասնավորապես մասնակցում է կոմիտեում ներկայացված զեկույցների քննարկմանը.
- համագործակցում է կառավարությունների հետ՝ աջակցելով ռազմավարությունների մշակմանը և իրականացմանը՝ ի կատարումն Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի դիտարկումների.
- երաշխավորում է, որ ձայները, որոնք հաճախ մնում են չլսված, արտացոլվեն Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացվող տեղեկություններում:[1]

Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ը գործունեությունը սկսել է 1994 թվականից: Աջակցում է ՀՀ Կառավարությանը՝ մշակելու և իրագործելու բարեփոխումներ Հայաստանում երեխայի իրավունքների իրացման խոչընդոտների վերացման նպատակով՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենակարիքավոր և խոցելի երեխաներին:[2]

1 Տե՛ս www.unicef.org/child-rights-convention/unicef-role, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:
2 Տե՛ս www.unicef.org/armenia, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

Բառարան

Կոմպետենցիա[3]

Կոմպետենցիա (կոմպետենցիաներ, կոմպետենտություն) եզրույթը միանշանակ սահմանելը հեշտ չէ: Այն հիմնականում կիրառվում է կարողություն, ունակություն, հնարավորություն, արդյունավետություն կամ հմտություն իմաստներով: Անհատները, սոցիալական խմբերը կամ հաստատությունները օժտված են որոշակի կոմպետենցիաներով, երբ ունեն կամ ձեռք են բերում զարգացման հատուկ նպատակներին հասնելու պայմաններ և բավարարում են արտաքին միջավայրի կողմից առաջադրված կարևոր պահանջներին: Դպրոցական միջավայրում ի հայտ եկած սոցիալական և համայնքային նոր կարիքներին համարժեք արձագանքելու համար ուսուցիչները պետք է զարգացնեն նոր կոմպետենցիաներ, ինչպիսիք են, օրինակ, կոնֆլիկտների կառավարումը, արձագանքման մշակույթը, միջմշակութային զգայունակությունն ու հաղորդակցությունը, խորհրդատվական հմտությունները և այլն:

Կոմպետենցիան ավելին է, քան գիտելիքն ու հմտությունները:

Կոմպետենցիան միավորում է իր մեջ մի քանի բաղադրիչներ, ինչպիսիք են՝

- գիտելիքը (իմանալ՝ ի՞նչի հետ գործ ունենք).
- վերաբերմունքն ու վարքագծի ձևը (գիտակցել՝ ինչպե՞ս ենք գործում, ո՞ր իրավիճակում և ինչո՞ւ),
- դիրքորոշումները (բաց լինել փոփոխությունների առջև, մոտիվացվել),
- ընթացակարգային հմտությունները (իմանալ՝ ի՞նչ անել),
- ճանաչողական հմտությունները (աշխատել տվյալների հետ, ձևավորել քննադատական մտածողություն ու քննադատական վերլուծություն),
- փորձառական հմտությունները (իմանալ, թե ինչպե՞ս վարվել՝ հիմնվելով ձեռք բերված գիտելիքների ու սոցիալական հմտությունների վրա):

Մարդու իրավունքների պաշտպան (Օմբուդսման)

Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, որոշ դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

Օմբուդսման բառն ունի սկանդինավյան ծագում: 1713 թվականին այն առաջին անգամ օգտագործել է Շվեդիայի թագավորը «Արքայական գերագույն օմբուդսմանի» հաստատությունը հիմնադրելիս:

Այսօր օմբուդսմանների հաստատություններ գոյություն ունեն աշխարհի ավելի քան 100 երկրներում:[4] Հայաստանի Հանրապետությունում օմբուդսմանին բնորոշ իրավական կարգավիճակով օժտված է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը:

Օգտակար հղումներ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք՝ www.arlis.am/DocumentView.aspx?docid=96299

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան՝ www.ombuds.am

3 Տե՛ս «Ինչպես կարող են բոլոր ուսուցիչները օժանդակել քաղաքացիության և մարդու իրավունքների կրթությանը» (կոմպետենցիաների զարգացման շրջանակ)՝ https://rm.coe.int/how-all-teachers-can-support-citizenship-and-human-rights-education-a-/168076bec2, էջ 14-15, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

4 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կայք, Պատմություն՝ https://ombuds.am/am/site/AboutHistory, վերջին անգամ դիտվել է 01.11.21թ.:

©UNICEF Armenia/2020/Avagyan

1. Երեխայի իրավունքներ

Ինչո՞ւ է երեխայի իրավունքների ուսումնասիրությունը կարևոր և ի՞նչ ամրագրում են դրանք ստացել միջազգային փաստաթղթերում

1948 թվականին Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակեց ու համաձայնեց, որ յուրաքանչյուր մարդ օժտված է հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներով ու ազատություններով:

Հռչակագրում ամրագրված իրավունքները վերաբերում են բոլոր մարդկանց, հետևաբար՝ նաև երեխաներին: Եվ ուրեմն՝ ինչո՞ւ ենք առանձնացնում երեխաներին և խոսում երեխաների իրավունքների մասին:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ընդգծվում է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության ու օժանդակության իրավունք (հոդված 25): Երեխաների համար առանձնահատուկ կերպով հոգ տանելու, նրանց աջակցելու ու պաշտպանելու անհրաժեշտությունը գիտակցվել էր նաև ավելի վաղ: 1924 թվականին Ազգերի լիգան ընդունել էր «Երեխայի իրավունքների մասին» հռչակագիրը, որը հայտնի է որպես Ժնևի հռչակագիր: Այս հռչակագրով առաջին անգամ ճանաչվեց և հաստատվեց, որ երեխաների համար գոյություն ունեն հատուկ իրավունքներ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից հետո ի հայտ եկան Ժնևի հռչակագրի բացերը, անհրաժեշտություն առաջացավ վերանայել հռչակագիրը և ընդլայնել երեխաների իրավունքների շրջանակը: 1959 թվականի նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Երեխայի իրավունքների հռչակագիրը»: «Երեխայի իրավունքների հռչակագիրը» ևս ելնում է այն կանխադրույթից, որ երեխան ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության կարիք, և ընդգծում, որ մարդկությունը պարտավոր է տալ երեխաներին իր ունեցած լավագույնը: 1959 թվականի հռչակագիրը կազմված է 10 սկզբունքից, որոնցում ձևակերպված են երեխաների հատուկ պաշտպանության, խտրականությունից զերծ մնալու,անվան ու ազգության, կրթության, ժամանցի, աջակցող միջավայրի ու առողջության պահպանման, ներդաշնակ զարգացման, անտեսումից, դաժան վերաբերմունքից, շահագործումից, թրաֆիքինգից և աշխատանքի վատթարագույն ձևերից զերծ լինելու, հաշմանդամություն ունեցող երեխաների համար հատուկ կրթության, խնամքի ու աջակցության իրավունքները:

Հաշվի առնելով երեխաների նկատմամբ առանձնահատուկ հոգածության անհրաժեշտությունը, կարևորելով երեխաների անհատականության լիակատար ու բազմակողմանի զարգացումը, ընդունելով, որ աշխարհի բոլոր երկրներում կան բացառիկ ծանր պայմաններում ապրող երեխաներ՝ Միավորված ազգերի կազմակերպությունը 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան: Այն ուժի մեջ մտավ 1990 թվականին:

Կոնվենցիան միջազգայնորեն ճանաչված առաջին փաստաթուղթն է, որով ամրագրվում է երեխայի՝ որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտի կարգավիճակը: 1924 և 1959 թվականների հռչակագրերը հիմնականում դիտարկում էին երեխային որպես «պաշտպանության սուբյեկտ», այլ ոչ թե անկախ և ինքնուրույն իրավատեր՝ իրավունքներ ունեցող անձ: Կոնվենցիայում ամրագրված իրավունքները հարմարեցված են երեխայի կարիքներին, հաշվի են առնում նրա խոցելիությունն ու զարգացման անհրաժեշտությունը և նախատեսում են հատուկ աջակցություն ու պաշտպանություն: Կոնվենցիան երաշխավորում ու սահմանում է նվազագույն չափանիշներ երեխայի բոլոր իրավունքների պաշտպանության համար: Կոնվենցիան, որը, ի տարբերություն հռչակագրի, իրավաբանորեն պարտադիր փաստաթուղթ է, պարտավորեցնում է այն վավերացրած մասնակից պետություններին ձեռնարկել բոլոր օրենսդրական, վարչական և այլ միջոցները, որոնք անհրաժեշտ են կոնվենցիայով ճանաչված իրավունքների իրականացման համար:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան վավերացրել են աշխարհի բազմաթիվ պետություններ: Նրանք պարտավորվել են հարգել, պաշտպանել և իրականացնել Կոնվենցիայով սահմանված իրավունքները: Հարգելու պարտավորությունը նշանակում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն չմիջամտել երեխաների կողմից իրենց իրավունքների իրացմանը, պաշտպանելու պարտավորությունը նշանակում է թույլ չտալ երրորդ անձանց միջամտելու երեխաների կողմից իրենց իրավունքների իրացմանը, իրականացնելու պարտավորությունը նշանակում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ երեխաների իրավունքների լիարժեք իրացման համար:

Պետությունները համաձայնել են, որ երեխաներն են յուրաքանչյուր հասարակության ու պետության ապագան, որ երեխան օժտված է իրավունքներով և որ իրենք՝ պետությունները, պարտավոր են պաշտպանել երեխայի իրավունքները: Իսկ երեխաների իրավունքները պաշտպանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է բարձրացնել երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Յուրաքանչյուր ոք, առաջին հերթին՝ երեխաները, ծնողներն ու երեխաների հետ աշխատող մեծահասակներն ունեն երեխայի իրավունքներն ուսումնասիրելու կարիք:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան թե՛ երեխաներին և թե՛ մեծահասակներին հրաշալի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու երեխայի իրավունքները: Եվ ուրեմն՝ եկե՛ք ծանոթանանք իրավունքների պաշտպանության միջազգային համակարգի այդ կարևոր բաղադրիչին:

Օգտակար հղումներ

«Երեխայի իրավունքների հռչակագիր», 1959 թվական՝
www.refworld.org/docid/3ae6b38e3.html (անգլերեն)
www.un.org/ru/documents/decl_conv/declarations/childdec.shtml (ռուսերեն)

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, 1989 թվական՝
www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503

©UNICEF Armenia/2020/Avagyan

2. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա. ընդհանուր բնութագիր

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան դարձավ այն բեկումնային կետը, որից հետո աշխարհն ընդունեց, որ երեխաները ոչ միայն պաշտպանության օբյեկտներ են, այլև քաղաքացիական ու քաղաքական իրավունքների կրողներ:

Մոդ դե Բուր Բուկիկիո
Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի տեղակալ
(պաշտոնավարել է 2002-2012թթ.)

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունել է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան 1989 թվականին՝ ՄԱԿ-ի անդամ երկրների հետ շուրջ տասը տարի տևած բանակցություններից ու փոխզիջումներից և ոչ կառավարական կազմակերպությունների հետ մեծաքանակ խորհրդակցություններից հետո: Այդ ժամանակից ի վեր կոնվենցիան, համեմատած մարդու իրավունքների վերաբերյալ ցանկացած այլ պայմանագրի հետ, վավերացրել են ավելի մեծ թվով պետություններ՝ ամենաքիչ թվով վերապահումներով:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայում երեխա է համարվում 18 տարեկան չդարձած յուրաքանչյուր մարդ և հռչակվում է, որ երեխան լիարժեքորեն օժտված է մարդու իրավունքներով: Կոնվենցիան կազմված է 54 հոդվածից. 1-41-րդ հոդվածները վերաբերում են երեխայի իրավունքներին, 42-րդ հոդվածն ուղղված է Կոնվենցիայի մասին հանրային իրազեկվածության բարձրացմանը, իսկ 43-54-րդ հոդվածները վերաբերում են Կոնվենցիայի մշտադիտարկմանը, վավերացմանը և իրականացմանը:

Կոնվենցիայի չորս ուղենիշային սկզբունքները

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի չորս հոդվածներ, որոնք հայտնի են որպես Կոնվենցիայի ուղենիշային սկզբունքներ, հատուկ ուշադրության են արժանացած: Այդ չորս սկզբունքները (հոդվածները) նպատակաուղղված են ապահովելու Կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքների լիակատար և արդյունավետ կիրառումը: Երեխաների համար հավասար հնարավորությունների ապահովումն ու նրանց իրավունքների պաշտպանությունը կախված է նրանից, թե ինչպես են ապահովվում Կոնվենցիայի այդ չորս հիմնաքարային սկզբունքները: Այդ չորս սկզբունքները լիովին նոր վերաբերմունք են ձևավորում երեխաների նկատմամբ՝ դարձնելով Կոնվենցիան էթիկական ու գաղափարական արժեքավոր հարթություն: Սկզբունքների հիմքում ընկած հիմնական գաղափարն այն է, որ ԵՐԵԽԱՆԵՐՆ ԱՆՀԱՏՆԵՐ են: Իսկ երեխաների խաղալու իրավունքի ամրագրումը կարծես հաստատում է մանկության արժեքը և օգնում չմոռանալ, որ այդ շրջանը կարևոր նախապատրաստական փուլ է յուրաքանչյուր մեծահասակի համար:

1. Առանց խտրականության

Բոլոր երեխաներն օժտված են նույն իրավունքներով և երբեք չպետք է ենթարկվեն խտրականության: Երեխաներին հավասար հնարավորություններ տրամադրելու պարտավորությունը սահմանվում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածում. «Մասնակից պետությունները հարգում և ապահովում են Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար՝ առանց որևէ խտրականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից»:

2. Երեխայի լավագույն շահերը

Երեխաների հետ կապված բոլոր գործողություններում առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Բոլոր չափահաս անձինք պետք է անեն այն, ինչը լավագույնն է երեխայի համար, որոշում ընդունելիս նրանք պետք է մտածեն, թե իրենց որոշումներն ինչպես կազդեն երեխայի վրա: Երեխայի շահերը բոլոր դեպքերում գերակա են մեծահասակների, օրինակ՝ ծնողների, ուսուցիչների, խնամակալների շահերի նկատմամբ: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:

Հարց . Երեխայի լավագույն շահերի ապահովումը «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կարևոր սկզբունքներից է: Բայց ո՞վ է որոշում՝ ինչն է երեխայի համար ավելի լավ: Ի՞նչ է տեղի ունենում, երբ ծնողները, ուսուցիչները, իշխանությունները կամ երեխան համակարծիք չեն այն հարցում, թե որն է երեխայի համար «լավագույնը»:

3. Կյանքի ու զարգացման իրավունք

Երեխայի տնտեսական և սոցիալական իրավունքների հիմքում ընկած բանաձևը սահմանվում է երեխայի՝ կյանքի իրավունքն ամրագրող հոդվածում: Հոդվածը ոչ միայն խոսում է երեխայի ապրելու իրավունքի մասին, այլև սահմանում է նրա գոյատևման ու առողջ զարգանալու իրավունքը: 6-րդ հոդվածի 2-րդ մասում գրված է. «Մասնակից պետությունները հնարավոր առավելագույն չափով պետք է ապահովեն երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը»:

4. Լսված լինելու իրավունք

Կոնվենցիայի մյուս՝ չափազանց կարևոր, սկզբունքը հարգանքն է երեխայի կարծիքի նկատմամբ: Այս սկզբունքն ամրագրված է Կոնվենցիայի 12-րդ հոդվածում. «Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն»:

Կոնվենցիայում առանձնահատուկ ընդգծվում է երեխայի ընտանիքի դերի, նրա հեղինակության ու պատասխանատվության կարևորությունը: Հռչակվում է, որ երեխան ունի ոչ միայն ընտանիքի լեզվի ու մշակույթի, այլև այդ լեզվի ու մշակույթի նկատմամբ հարգանքի իրավունք: Կոնվենցիան նաև կոչ է անում պետություններին օժանդակելու այն ընտանիքներին, որոնք չունեն իրենց երեխաների համար կյանքի արժանապատիվ մակարդակ ապահովելու հնարավորություն:

Երեխայի բարեկեցության համար ընտանիքի կարևորությունն ընդունելու հետ մեկտեղ՝ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան նաև ճանաչում է երեխաներին որպես իրավունքներով օժտված անհատականություններ և, նրանց զարգացող ունակություններին զուգընթաց, երաշխավորում անհատականության, մասնավոր կյանքի, տեղեկություններ որոնելու, ստանալու և հաղորդելու, մտքի, խղճի ու կրոնի ազատության, կարծիքն ազատորեն արտահայտելու և միավորումների մեջ մտնելու իրավունքները:

Կոնվենցիան հսկայական ազդեցություն է թողել ողջ աշխարհի վրա: Այն նպաստել է ՄԱԿ-ի կառույցների, մասնավորապես՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ու Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված ջանքերի ավելացմանը, ազդել է երեխաների իրավունքներին վերաբերող այլ պայմանագրերի (օրինակ՝ «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիան և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան) վրա, ուղղորդել է երեխայի իրավունքների ոտնահարման՝ լայնորեն տարածված ձևերն արմատախիլ անելուն ուղղված շարժումը (այդպիսի ձևեր են, օրինակ, մանկական մարմնավաճառությունը և երեխաների մասնակցությունը զինված հակամարտություններին, որոնք այսօր դիտարկվում են «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրություններում):

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան հզոր ու արդյունավետ գործիք է, որը մղում է բոլորին, այդ թվում՝ հենց երեխաներին, ուսումնասիրելու երեխաների իրավունքները, օգնում մարդկանց սահմանելու այդ իրավունքների ապահովմանն ուղեկցող բարդ պարտականությունները:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի մշտադիտարկումը

Ինչպես մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր պայմանագրերում, այնպես էլ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում կան հոդվածներ, որոնք սահմանում են պետությունների կողմից այդ պայմանագրի դրույթների պահպանումը վերահսկելու կարգը: Կոնվենցիայի 42-45-րդ հոդվածներում սահմանվում են այդ գործընթացներն ու պահանջները.

- պահանջվում է, որ մասնակից պետությունները Կոնվենցիայի սկզբունքների և դրույթների մասին լայնորեն տեղեկացնեն ինչպես մեծահասակներին, այնպես էլ երեխաներին (հոդված 42).
- հիմնվում է Երեխաների իրավունքների կոմիտե, որի կազմի մեջ մտնում են մասնակից պետությունների կողմից Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի դրույթների իրականացումը վերահսկող 18 անկախ փորձագետ (հոդված 43).
- պահանջվում է, որ մասնակից պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ ներկայացնեն զեկույցներ Կոնվենցիայում ամրագրված իրավունքների կատարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների և այդ իրավունքների իրականացման գործում ձեռք բերված առաջընթացի մասին (հոդված 44).
- խրախուսվում է միջազգային համագործակցությունը Կոնվենցիայում ամրագրված իրավունքների իրականացման հարցում, հատկապես՝ համագործակցությունը ՄԱԿ-ի մասնագիտացված կառույցների, օրինակ՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ (հոդված 45):

Այդ պարտադիր զեկույցներում, որոնք սովորաբար կազմում են երեխաների հարցերով մասնագիտացված պետական կառույցները, ցույց է տրվում, թե ով և որ իրավունքներից չի օգտվում, ներկայացվում են իրավունքների իրականացման սահմանափակումներն ու խոչընդոտները և այն միջոցառումները, որոնք պետությունը մտադիր է ձեռնարկել այդ խնդիրները հաղթահարելու համար: Զեկույցը ներկայացվում է Երեխաների իրավունքների կոմիտե: Կոմիտեն ուսումնասիրում է զեկույցը և ներկայացնում դիտողություններ ու ընդհանուր բնույթի առաջարկություններ ու հանձնարարականներ:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, երեխաներն ու երիտասարդները, ինչպես նաև՝ երեխաների հետ աշխատող մարդիկ հնարավորություն ունեն մասնակցելու մշտադիտարկման և զեկույցների ներկայացման գործընթացին: Նրանք կարող են պատրաստել այլընտրանքային կամ անկախ զեկույցներ, որոնցում կարող են վիճարկվել պետության հայտարարությունները կամ բարձրաձայնվել հարցեր, որոնք չեն հիշատակվել ազգային զեկույցներում:

Բառարան

Մասնակից պետություն

Պետություն (օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունը), որը վավերացրել է միջազգային պայմանագիրը, օրինակ՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, և, հետևաբար, իրավաբանորեն պարտավորված է կատարել այդ պայմանագրի դրույթները:

Վավերացում

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից օրենք ընդունելու կամ հանրաքվեի միջոցով միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր ճանաչելուն ուղղված ներպետական ընթացակարգ:

Օգտակար հղումներ

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրություն՝
www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24543

«Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիա՝
www.arlis.am/DocumentView.aspx?docID=48023

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա՝
www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64762

©UNICEF Armenia/2021/Mahari

©UNICEF Armenia/2020/Grigoryan

3. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա. հիմնական սկզբունքները

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածում ամրագրված է Կոնվենցիան վավերացրած պետությունների պարտականությունը ձեռնարկելու «....անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական և այլ միջոցները՝ Կոնվենցիայով ճանաչված իրավունքների իրականացման համար»:

Մասնակից պետություններին Կոնվենցիայի մեկնաբանման և դրանում ճանաչված իրավունքների իրականացման հարցում ուղղորդելու նպատակով առանձնացվում են Կոնվենցիայի 4 հոդվածներ՝ որպես Կոնվենցիայի ուղենիշային սկզբունքներ:

Այդ հոդվածները ոչ միայն վերաբերում են երեխայի կոնկրետ իրավունքներին, այլև առնչվում են Կոնվենցիայով ճանաչված մյուս բոլոր իրավունքներին և նպատակաուղղված են ապահովելու դրանց լիակատար և արդյունավետ կիրառումը:

Ուղեցուցի շրջանակներում մանրամասն կանդրադառնանք այդ սկզբունքներից երեքին՝

- **առանց խտրականության.**
- **երեխայի լավագույն շահեր.**
- **լսված լինելու իրավունք:**

Առանց խտրականության

«Մասնակից պետությունները հարգում և ապահովում են սույն Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար, առանց որևէ խտրականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից:

Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը խտրականության բոլոր ձևերից կամ պատժից՝ նրա ծնողների կամ օրինական խնամակալների կամ ընտանիքի այլ անդամների կարգավիճակի, գործունեության, արտահայտած հայացքների կամ համոզմունքի հիմքով»:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա
հոդված 2

Խտրականությունը գոյություն է ունեցել մարդկության պատմության ողջ ընթացքում: Խտրականությունը հակասում է մարդու իրավունքների հիմնարար սկզբունքին՝ բոլոր մարդիկ հավասար են իրենց արժանապատվությամբ և իրավունքներով (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 1): Այս սկզբունքն ամրագրված է մարդու իրավունքներին վերաբերող բոլոր հիմնարար փաստաթղթերում: Խտրականությունից պաշտպանված լինելու պահանջ առկա է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայում, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայում, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայում և այլ միջազգային փաստաթղթերում:

Խտրականության մեկ համընդհանուր սահմանում գոյություն չունի: Սակայն, ելնելով մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերից՝ կարող ենք եզրակացնել, որ խտրականությունը զրկում է մարդուն իր իրավունքներից ու ազատություններից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Խտրական վերաբերմունքը դրսևորվում է ինչ-որ հատկանիշի հիմքով. մարդիկ խտրականության են ենթարկվում իրենց ազգային պատկանելիության, լեզվի, քաղաքական համոզմունքների, սոցիալական ծագման կամ որևէ այլ պատճառով:

Մենք գործ ունենք խտրականության հետ, երբ նմանատիպ իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ առանց որևէ օբյեկտիվ կամ հիմնավորված պատճառի դրսևորվում է տարբերակված վերաբերմունք [5]: Օրինակ՝ եթե դպրոցը կատարում է առաջին դասարանցիների ընդունելություն, ընդունում է բոլոր երեխաների փաստաթղթերը՝ բացի ազգությամբ եզդի մեկ երեխայից, ապա մենք, ըստ երևույթին, գործ ունենք ազգային պատկանելիության հիմքով խտրականության հետ:

Ընդունված է տարբերակել խտրականության մի քանի տեսակ:

Ուղղակի խտրականություն

Ուղղակի խտրականությունը կոնկրետ անձի կամ անձանց խմբի դեմ ուղղված որոշումները, գործողությունները կամ անգործությունն են, որոնց հետևանքով այդ անձը կամ անձանց խումբը հայտնվում է այլ անձանց համեմատությամբ նվազ բարենպաստ կարգավիճակում և զրկվում է ուրիշների հետ հավասար իրավունքներ ու կարգավիճակ ունենալու հնարավորությունից:

Վերոնշյալ օրինակում գործողությունն ուղղված էր մեկ երեխայի դեմ, ուստի այդտեղ գործ ունենք ուղղակի խտրականության հետ: Ուղղակի խտրականության օրինակներ են նաև ուսուցչի ազատումն աշխատանքից նրա քաղաքական հայացքների պատճառով կամ հաշմանդամություն ունեցող աշակերտին դասարանական միջոցառմանը մասնակից չդարձնելը:

5 Տե՛ս Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, կետ 199՝ http://justice.am/storage/files/legal_acts/legal_acts_7182269154741_VIRABYAN-last.pdf, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

Անուղղակի խտրականություն

Ի տարբերություն ուղղակի խտրականության, անուղղակի խտրականությունն ուղղված չէ կոնկրետ անձի կամ անձանց խմբի դեմ: Անուղղակի խտրականություն կարող են համարվել առաջին հայացքից չեզոք, ոչ խտրական օրենքները, որոշումները, քաղաքականությունը, գործողություն կամ անգործությունը, որոնց իրականացման կամ կիրառման դեպքում առաջանում է կամ կարող է առաջանալ որոշակի հատկանիշներով օժտված անձի կամ անձանց խմբի իրավունքների սահմանափակում կամ արտոնությունների ձեռք բերում[6]:

Անուղղակի խտրականության դրսևորումները հստակ տարբերակելու համար անհրաժեշտ է վերհիշել խտրականության՝ վերը առաջարկված սահմանման «օբյեկտիվ կամ հիմնավորված պատճառ» արտահայտությունը: Միշտ չէ, որ որևէ հատկանիշով կամ հատկանիշներով տարբերակված մոտեցումը ենթադրում է խտրական վերաբերմունք:

«2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդման մեջ քննարկվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման դիմաց ներդրումային գումարների գանձման խնդիրը[7]: Ներդրումային գումարների վճարումը դասագրքերի տրամադրման պարտադիր պայման է: Ուսումնական հաստատությունները ստանում են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի համար փոխհատուցվող գումար: Սակայն Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ չկան հստակ չափանիշներ, որոնցով որոշվում է երեխայի՝ սոցիալապես անապահով ընտանիքից լինելը: Որպես արդյունք՝ նույն սոցիալական պայմաններում ապրող երեխաներից ոմանք չեն վճարում ներդրումային գումարը, իսկ մյուսները՝ վճարում են: Դասագրքերի օգտագործման համար գումար գանձելու որոշումն առերևույթ ուղղված չէ որևէ երեխայի կամ երեխաների որևէ խմբի դեմ, այն ոչ խտրական որոշում է: Սակայն այդ որոշման կիրառման արդյունքում խոցելի խմբերի երեխաները ենթարկվում են խտրականության՝ անուղղակի խտրականության:

Հարց. Իսկ արդյո՞ք խտրականություն չէ, երբ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներն ազատվում են դասագրքերի օգտագործման դիմաց ներդրումայի գումարների վճարումից, իսկ մյուս երեխաները՝ ոչ:

Պարզվում է՝ ոչ: Անուղղակի խտրականությունը սահմանելիս նշեցինք, որ առերևույթ ոչ խտրական օրենքները, որոշումները և այլն կարող են հանգեցնել անձի կամ անձանց խմբի իրավունքների սահմանափակման կամ արտոնությունների ձեռքբերման: Եթե ընդունվի որոշում, որով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներն ազատվեն դասագրքերի օգտագործման դիմաց վճարելուց, ապա, թվում է, թե այդ որոշումը կհանգեցնի անուղղակի խտրականության, քանզի առաջացնում է որոշակի խմբի՝ այս դեպքում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների արտոնությունների ձեռքբերման: Սակայն իրականում այստեղ խտրականություն չկա:

Այստեղ գործ ունենք կառուցողական գործողության հետ: «Կառուցողական գործողությունները» ժամանակավոր միջոցառումներ են, որոնք կիրառվում են պետական մարմինների կամ մասնավոր կազմակերպությունների կողմից՝ մարդկանց որոշակի խմբի և հասարակության միջև անհավասարությունը վերացնելու նպատակով՝ հնարավորություն տալով անհավասար վիճակում գտնվող մարդկանց խմբին օգտվել օրենքով նախատեսված այն նույն իրավունքներից ու հնարավորություններից, որոնցից օգտվում են հասարակության մնացած անդամները[8]: Այլ կերպ՝ այստեղ խտրական որոշումն ուղղված կլինի խտրականության վերացմանը, այն հնարավորություն կտա անհավասար պայմաններում հայտնված երեխաներին հավասարապես իրականացնել իրենց կրթություն ստանալու իրավունքը:

Կառուցողական գործողություններն այն միջոցներից մեկն են, որոնք պետությունները, պետական ու մասնավոր կազմակերպությունները ձեռնարկում են խտրականության բացառման համար:

Խտրականության տեսակներից են նաև՝

Ասոցացված կամ զուգորդված խտրականությունը

Ասոցացված խտրականությունն ուղղված է որևէ կոնկրետ անձի դեմ, բայց պայմանավորված է ոչ թե այդ անձի, այլ մեկ ուրիշի որևէ հատկանիշով: Օրինակ՝ երեխան դպրոցում ենթարկվում է խտրականության, որովհետև նրա ծնողները «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամներ են: Կրոնի հիմքով խտրականությունն ուղղված է երեխայի դեմ, բայց պատճառը ծնողների կրոնական հայացքներն են:

Խտրականության հրահրումը

Խտրականության հրահրումն անձի կամ անձանց խմբի նկատմամբ խտրական վերաբերմունք դրսևորելու կոչ, ցուցում, հրահանգ է: Օրինակ՝ ուսուցիչը հրահրում է աշակերտներին հեռու մնալ այն աշակերտից, որի ծնողները ՄԻԱՎ վարակակիր են:

Առկա են խտրականության այլ տեսակներ ևս:

Տարբեր են նաև խտրականության պատճառները: Միշտ չէ, որ խտրականությունը գիտակցված է ու միտումնավոր: Հաճախ խտրականությունն անհանդուրժողականության, անսովոր, ընդունվածից տարբեր որևէ երևույթի հանդեպ բացասական վերաբերմունքի, անկրթության, կարծրատիպերի կամ նախապաշարմունքների հետևանք է:

Այն, որ երեխան իրավունք ունի զերծ լինելու խտրականության բոլոր ձևերից, նշանակում է, որ պետությունները, որոնք պարտավորվել են հարգել ու ապահովել երեխայի այդ իրավունքը, պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը՝ խտրականության դրսևորումները բացահայտելու, վերացնելու և հետագայում կանխելու համար: Խտրականության բացառման ու կանխման համար կարևոր է, որ պետության ձեռնարկած միջոցներն ուղղված լինեն ոչ միայն կոնկրետ խնդրի հետևանքների վերացմանը, այլև հասարակության կրթվածության ու իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը:

Ընդհանրապես երեխայի՝ հասարակության լիարժեք անդամ դառնալու ճանապարհի կարևորագույն կանգառներից մեկը դպրոցն է: Ուստի, չափազանց կարևոր է, որ դպրոցում ստեղծվի այնպիսի կրթական միջավայր, որում երեխաները կսովորեն լինել ոչ խտրական: Կարևոր է նաև, որ ուսուցիչները ևս բացառեն իրենց կողմից խտրականության յուրաքանչյուր դրսևորում:

Այժմ, երբ բավականաչափ գիտելիքներ ունենք խտրականության տեսակների, հիմքերի, պատճառների ու բացառման անհրաժեշտության մասին, փորձենք վերլուծել ներկայացված իրավիճակները և պատասխանել դրանց հաջորդող հարցերին:

6 Ուղղակի և անուղղակի խտրականության համար տե՛ս ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի թիվ 16 Ընդհանուր մեկնաբանություն, կետ 12, 13:

7 Տե՛ս «2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում, էջ 140-142՝ https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

8 Տե՛ս Ա. Ղազարյան, Վ. Գրիգորյան, «Արդյոք անհրաժե՞շտ է «խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենքի ընդունումը», Եր. 2015, էջ 18, 19՝ http://moj.am/storage/uploads/k1k_1HRAP.pdf, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

Իրավիճակ 1.

Ա համայնքի Բ գյուղը սահմանամերձ գյուղ է: Տեղի դպրոցում սովորում է 12 աշակերտ: Դասարանները երկկազմ ու եռակազմ են: Գյուղում ուսուցիչների պակաս կա: Անգլերենի, քիմիայի ու կենսաբանության ուսուցիչների թափուր տեղի համար հայտարարվող մրցույթներին տևական ժամանակ է, ինչ որևէ թեկնածու չի դիմում: Ֆիզիկայի ուսուցիչը դասավանդում է նաև ֆիզկուլտուրա ու մաթեմատիկա: Գյուղում սեզոնային աշխատանքների ժամանակ տղա աշակերտները երկար ժամանակ չեն հաճախում դպրոց. նրանք օգնում են իրենց ծնողներին:

Հարց. Կա՞ այստեղ խտրականություն: Եթե այո, ապա ո՞ր հատկանիշի կամ հատկանիշների հիմքով են երեխաները ենթարկվում խտրականության: Ո՞ր տեսակի հետ գործ ունենք: Ի՞նչ կարող է կամ պետք է այս իրավիճակում անի պետությունը երեխաներին խտրականությունից պաշտպանելու համար:

Իրավիճակ 2.

Արմենը հաշմանդամություն ունեցող երեխա է: Նա սովորում է հանրակրթական ուսումնական հաստատության 8-րդ դասարանում: Արմենն ունի հենաշարժողական համակարգի խնդիրներ և բանավոր խոսքի խանգարում: Արմենի սիրած բանաստեղծը Հովհաննես Թումանյանն է: Գրականության ուսուցչուհին կազմակերպել էր Թումանյանի 150-ամյակին նվիրված միջոցառում: Արմենը շատ էր ուզում միջոցառման ժամանակ ասմունքել իր սիրած բանաստեղծությունը: Սակայն ուսուցչուհին ասաց, որ միջոցառումը պետք է հասցնեն ավարտել մեկ դասաժամի ընթացքում, իսկ եթե Արմենն ասմունքի, չեն հասցնի, քանի որ նա դանդաղ է խոսում: Ուսուցչուհին խոստացավ, որ մեկ ուրիշ անգամ Արմենը նույնպես կմասնակցի:

Հարց. Կա՞ այստեղ խտրականություն: Եթե այո, ապա ո՞ր հատկանիշի կամ հատկանիշների հիմքով է երեխան ենթարկվում խտրականության: Ո՞ր տեսակի հետ գործ ունենք: Ի՞նչ կարելի է անել խտրականությունը բացառելու համար:

Օգտակար հղումներ

«2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում՝ https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

«Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց, Եր. 2018՝ http://old.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/25916e056fa49cb25bdba4ffde02141f.pdf, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

Երեխայի լավագույն շահերը[9]

«Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան»:

ՀՀ Սահմանադրություն
37-րդ հոդվածի 2-րդ մաս

«Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա
հոդված 3, մաս 1

Երեխայի լավագույն շահերի գաղափարը նոր չէ. այն ձևակերպվել է Կոնվենցիայից առաջ և արտացոլվել դեռևս 1959 թվականի «Երեխայի իրավունքների հռչակագրի» 2-րդ կետում. «Երեխայի համար օրենքով ու այլ միջոցներով պետք է ապահովվի հատուկ պաշտպանություն և տրվեն հնարավորություններ ու բարենպաստ պայմաններ, որոնք թույլ կտան նրան ֆիզիկական, մտավոր, բարոյական, հոգևոր ու սոցիալական առումներով զարգանալ առողջ ու բնականոն ճանապարհով և ազատության ու արժանապատվության պայմաններում: Այս նպատակով օրենքներ հրապարակելիս առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի երեխայի լավագույն շահերի ապահովմանը»:

1989 թվականի Կոնվենցիայում երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելն արդեն ուղենիշային սկզբունք է, որով պետք է առաջնորդվել Կոնվենցիայով ճանաչված իրավունքներն իրականացնելիս: Կոնվենցիայի մի շարք հոդվածներ ուղղակիորեն հղում են անում երեխայի լավագույն շահերին: Այսպես, երեխայի լավագույն շահերն առաջնահերթ են ծնողներից երեխայի բաժանման (Հոդված 9), ընտանիքի վերամիավորման (Հոդված 10) ժամանակ, երեխայի նկատմամբ ծնողական պարտականություններում (Հոդված 18), ընտանեկան միջավայրում չմնալու և այլընտրանքային խնամք ստանալու (Հոդված 20), որդեգրման (Հոդված 21) դեպքերում, ազատազրկման դեպքում մեծահասակներից առանձնացվելու պահանջում (Հոդված 37):

Երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու սկզբունքն աչքի է ընկնում իր բարդությամբ. դրա բովանդակությունը պետք է հստակեցվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Չկան երեխայի լավագույն շահերը որոշող համընդհանուր բանաձևեր: Յուրաքանչյուր առանձին դեպք պահանջում է առանձին քննություն կամ անհատական մոտեցում: Երեխայի լավագույն շահերը որոշվում են միայն Կոնվենցիայի այլ դրույթների հետ զուգակցված: Այսինքն՝ այս սկզբունքը ճկուն է ու հարմարեցվող: Այն, թե տվյալ պարագայում որոնք են երեխայի լավագույն շահերը, որոշվում է այդ երեխայի կամ երեխաների առանձնահատկություններին համապատասխան՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակն ու երեխայի կարիքները: Անհատական դեպքերում որոշում կայացնելիս լավագույն շահերի գնահատումն ու որոշումը պետք է կատարվի այն կոնկրետ հանգամանքներին համապատասխան, որոնցում գտնվում է տվյալ երեխան: Կոլեկտիվ բնույթի, ասենք, օրենսդրական, որոշումներ կայացնելիս երեխաների լավագույն շահերի գնահատումն ու որոշումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով այն հանգամանքները, որոնցում գտնվում է երեխաների տվյալ խումբը կամ երեխաներն առհասարակ: Երկու դեպքում էլ լավագույն շահերը պետք է գնահատվեն ու որոշվեն Կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքների նկատմամբ լիարժեք հարգանքի հիման վրա:

Իր ճկունության շնորհիվ երեխայի լավագույն շահերի սկզբունքը կիրառելի է ցանկացած իրավիճակի նկատմամբ, որում գտնվում է յուրաքանչյուր երեխա: Մյուս կողմից՝ այդ ճկունությունը հաճախ շահարկվում է: Օրինակ՝ դա հաճախ են անում Կառավարություններն ու մյուս պետական մարմինները՝ լավագույն շահերի սկզբունքն իրենց, օրինակ, ռասիստական որոշումներն արդարացնելու համար: Ծնողները դա չարաշահում են երեխայի խնամակալությանը վերաբերող վեճերում, իսկ մասնագետները հաճախ վկայակոչում են այս սկզբունքի առարկայազուրկ և ոչ այնքան կարևոր լինելը, որպեսզի խուսափեն լավագույն շահերը գնահատելուց:

Մենք համոզված ենք, որ այս սկզբունքը չափազանց կարևոր է, ուստի չենք խուսափի այն բարդություններից, որոնց կարող ենք հանդիպել այն ուսումնասիրելիս, և կփորձենք առավելագույնս հասկանալ դրա էությունը: Այդ նպատակով մենք կփորձենք՝

- վերլուծել երեխայի լավագույն շահերի սկզբունքի ձևակերպման մեջ առկա բոլոր եզրույթները.
- տեսնել երեխայի լավագույն շահերի սկզբունքի կապը երեխայի այլ իրավունքների հետ.
- հասկանալ, թե ինչ պետք է հաշվի առնել երեխայի լավագույն շահերը գնահատելիս:

Այժմ եկե՛ք բառ առ բառ վերլուծենք ու հասկանանք Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը:

9 Կոնվենցիայի այս ուղենիշային սկզբունքը ներկայացվում է ըստ «Երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու երեխայի իրավունքի վերաբերյալ» երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 ընդհանուր մեկնաբանության (2013):

«Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:

1. Բոլոր գործողություններում

Երեխային կամ երեխաներին վերաբերող ցանկացած գործողություն կատարելիս պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել երեխայի լավագույն շահերին: «Գործողություն» բառն այստեղ նշանակում է ոչ միայն որոշում, այլև վերաբերում է երեխաներին առնչվող բոլոր արարքներին, առաջարկներին, գործընթացներին, ծառայություններին ու ձեռնարկվող միջոցառումներին: Որպես գործողություն են ընկալվում նաև անգործությունն ու գործողություններ չձեռնարկելը:

2. Նկատմամբ

Ասելով «երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում», նկատի ունենք և՛ այն գործողություններն ու որոշումները, որոնք անմիջականորեն վերաբերում են երեխային, երեխաներին կամ երեխաների որոշակի խմբին, և՛ այն գործողություններն ու որոշումները, որոնք կարող են ազդել երեխայի, երեխաների կամ երեխաների որոշակի խմբի վրա: Օրինակ՝ երեխաների «նկատմամբ» է ինչպես կրթության ոլորտին առնչվող որևէ նոր որոշում, որն ուղղիակիորեն շոշափում է երեխայի կրթության իրավունքը, այնպես էլ շրջակա միջավայրի մասին ընդունված որևէ օրենք, որն իր ազդեցությունը կթողնի երեխայի վրա:

Այստեղ կարևոր է ընդգծել, որ պետության ընդունած բոլոր որոշումներն էլ այս կամ այն կերպ առնչվում են երեխաներին: Ուստի երեխաների լավագույն շահերը գնահատելու ու որոշելու յուրաքանչյուր առանձին դեպքում հստակեցվում է առնչության աստիճանը:

Հարց. Այն դեպքում, երբ գյուղապետարանը նախատեսում է կառուցել նոր ճանապարհ, պե՞տք է մտածի, թե ինչպես այդ ծրագիրը կազդի երեխաների անվտանգության վրա:

3. Երեխաներ

«Երեխա» եզրույթը վերաբերում է 18 տարեկանը չլրացած յուրաքանչյուր մարդու: Երեխայի լավագույն շահերի սկզբունքը վերաբերում է երեխաներին անհատապես, հենց դա է հուշում սկզբունքում եզակի թվով գրված «երեխա» բառը: Այսինքն՝ մասնակից պետությունները պարտավորվում են գնահատել ու որոշել երեխայի լավագույն շահերը նրան վերաբերող անհատական որոշումներում: Մյուս կողմից՝ «երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում» ձևակերպման մեջ հոգնակի թվով գրված «երեխաներ» բառը հուշում է, որ լավագույն շահերի սկզբունքը վերաբերում է ոչ միայն առանձին երեխային, այլև երեխաների այս կամ այն խմբին:

4. Սոցիալական ապահովության հարցերով զբաղվող հանրային կամ մասնավոր կազմակերպություններ

«Սոցիալական ապահովության հարցերով զբաղվող հանրային կամ մասնավոր կազմակերպություններ» ասվածը չպետք է հասկանալ նեղ իմաստով: Խոսքը ոչ միայն հենց սոցիալական կազմակերպությունների մասին է, այլև վերաբերում է ցանկացած կազմակերպության կամ կառույցի, որի գործունեությունը կապված է երեխաների և նրանց իրավունքների հետ (օրինակ՝ առողջապահության, շրջակա միջավայրի պահպանության, հանգստի, կրթության կազմակերպման, ձեռնարկատիրության և այլ ոլորտների կազմակերպությունները):

5. Քրեական հետապնդման մարմիններ և դատարաններ

Խոսքը բոլոր տեսակի ու բոլոր ատյանների դատարանների մասին է: Քրեական դատավարությունում երեխայի լավագույն շահերի սկզբունքը կիրառվում է, երբ, օրինակ, քննարկման առարկա է երեխայի կամ նրա ծնողի առնչությունը հանցավոր արարքին կամ էլ երեխան քրեական վարույթին մասնակցում է վկայի կամ տուժողի կարգավիճակով:

Քաղաքացիական դատավարությունում երեխան կարող է դառնալ դատական գործընթացի մասնակից որդեգրման կամ ամուսնալուծության, խնամակալության, բնակության վայրի հարցերի որոշման, առանց խնամքի մնալու կամ դաժան վերաբերմունքի արժանանալու և այլ դեպքերում: Այսօրինակ իրավիճակներում ցանկացած որոշում կայացնելիս քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնի երեխայի լավագույն շահերին:

6. Վարչական մարմիններ

Վարչական մարմինների որոշումները բազմաբնույթ են: Դրանք կարող են վերաբերել կրթությանը, խնամքին, առողջապահությանը, երեխայի պաշտպանությանը, կյանքի պայմաններին, քաղաքացիության շնորհմանը, ապաստան տալուն և այլն: Թե՛ առանձին երեխային, թե՛ երեխաների խմբին վերաբերող արարքներում և որոշումներում վարչական մարմինները պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնեն երեխայի լավագույն շահերին:

7. Օրենսդիր մարմինը

Մեր երկրի օրենսդիր մարմինը ՀՀ Ազգային ժողովն է, որը պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնի երեխայի լավագույն շահերին ոչ միայն անմիջականորեն երեխաներին վերաբերող, այլև առհասարակ բոլոր օրենքների ընդունման ժամանակ:

Երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու սկզբունքի ձևակերպման մեջ օրենսդիր մարմնի հիշատակումը ևս մեկ անգամ ապացուցում է, որ սկզբունքը չի տարածվում միայն առանձին երեխայի նկատմամբ: Չէ՞ որ օրենսդիր մարմինն ընդունում է ոչ թե անհատական որոշումներ, այլ համընդհանուր ու համապարտադիր իրավական ակտեր:

Հարց. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասում խոսվում է սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների մասին և ոչինչ չի ասվում ծնողների մասին: Բայց չէ՞ որ ծնողները ևս կայացնում են երեխաներին վերաբերող որոշումներ: Ի՞նչ եք կարծում՝ ծնողները պե՞տք է առաջնահերթ ուշադրություն դարձնեն երեխայի լավագույն շահերին:

Հարցի պատասխանը միանշանակ է: Իհա՛րկե, այս սկզբունքը գործում է նաև ծնողների համար: Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին մասում արձանագրված է. «Ծնողները կամ, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալները երեխայի դաստիարակության ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվություն: Երեխայի լավագույն շահերը նրանց հիմնական հոգածության առարկան են»:

8. Առաջնահերթ ուշադրություն է դարձվում

Այս ձևակերպման հստակությունը ցույց է տալիս, որ մասնակից պետություններն իրավասու չեն որոշելու՝ ուշադրություն դարձնեն լավագույն շահերին, թե ոչ. նրանք պարտավոր են դա անել:

Երեխաներն ավելի քիչ հնարավորություններ ունեն պաշտպանելու իրենց շահերը, այդ շահերը պետք է հստակ գիտակցեն այն մեծահասակները, որոնք մասնակցում են երեխաներին առնչվող որոշումների կայացմանը:

Եթե երեխաների շահերի առաջնահերթությունը չշեշտադրվի, դրանք կանտեսվեն:

Երեխայի լավագույն շահերը գնահատվելուց ու որոշվելուց հետո կարող են առաջանալ այլ երեխաների, ծնողների, հասարակության իրավունքներին հակասող իրավիճակներ: Այդ հակասությունները պետք է հաղթահարվեն յուրաքանչյուր առանձին դեպքում՝ խստորեն պահպանելով բոլոր կողմերի շահերի հավասարակշռությունը և գտնելով հարմար փոխզիջումներ: Սակայն եթե չի ստացվում գտնել փոխզիջումային լուծում, առաջնահերթությունը միշտ պետք է տրվի երեխայի շահերին:

Ինչպե՞ս վարվել այն դեպքում, երբ ընտրությունը պետք է կատարվի ոչ թե երեխայի ու որևէ մեկ ուրիշի իրավունքների, այլ հենց երեխայի երկու իրավունքի միջև: Հենց այստեղ է, որ երեխայի լավագույն շահերի սկզբունքը հաճախ դառնում է շահարկումների առարկա կամ չարաշահվում է:

Հարց. Երեխայի ո՞ր իրավունքներն են ավելի կարևոր

Արդյո՞ք մենք կարող են պնդել, թե կրթություն ստանալու իրավունքն ավելի կարևոր է, քան երեխայի մտքի ազատության իրավունքը, կամ էլ իր հայացքներն ազատորեն արտահայտելու իրավունքը պակաս կարևոր է, քան առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքը: Իհա՛րկե չենք կարող: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն ընդգծում է, որ չկա երեխայի իրավունքների աստիճանակարգություն, որ Կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքներն էլ կոչված են ծառայելու երեխայի լավագույն շահերին: Երեխայի լավագույն շահերի բացասական մեկնաբանությունը չպետք է խոչընդոտի երեխայի որևէ իրավունքի իրականացմանը: Երեխայի լավագույն շահերի վերաբերյալ մեծահասակի կարծիքը չի կարող ավելի կարևոր լինել, քան Կոնվենցիայով ճանաչված իրավունքները պահպանելու պարտավորությունը [10]:

Երեխայի լավագույն շահերը գնահատելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ երեխայի կարողությունները շարունակաբար զարգանում են: Ուստի պետք է հաշվի առնել երեխայի զարգացման առանձնահատկությունները և կատարել դրանց կարճաժամկետ ու երկարաժամկետ վերլուծություն՝ գնահատելով երեխայի ներկա վիճակը և կարողությունների զարգացման շարունակականությունը, այլ ոչ թե կայացնել վերջնական ու անշրջելի որոշումներ:

Ներկայացնենք մի օրինակ, երբ հատվում են երեխայի կրթության և հավաքներին մասնակցելու իրավունքները: Դեպքերը վերլուծված են «2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդման մեջ:

«2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում արձանագրված հարցերից են երեխաներին հավաքներին մասնակցության և կրթության իրավունքների ճիշտ հավասարակշռումն ու երաշխավորումը: Այսպես, հավաքների օրերին Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել դպրոցների տնօրենների և ուսուցիչների ահազանգեր, որ տարբեր անձինք շրջում են դպրոցներով, պահանջում են ապահովել իրենց մուտքը դպրոցներ՝ դասերին մասնակցող երեխաներին քաղաքական բնույթ կրող հավաքներին ու երթերին ներգրավելու նպատակով: Ըստ ահազանգերի՝ այդ անձինք բարձրաձայն կոչերի, այդ թվում՝ բարձրախոսով վանկարկումների միջոցով երեխաներին դուրս են հրավիրում դպրոցներից, ուսուցչական կազմերի ու տնօրենների հասցեին հնչեցնում վիրավորական արտահայտություններ և երեխաներին կոչ անում չենթարկվել դասերին մասնակցելու ուսուցիչների կամ տնօրենների պահանջներին: Ստացած ահազանգերից մեկով էլ հանրակրթական դպրոցի ուսուցիչը տեղեկացրել է, որ դպրոց այցելած անձինք այդ պահին բակում գտնվող երեխաներին փորձել են տանել իրենց հետ: Այս տեղեկությունները վերաբերել են ինչպես հիմնական, այնպես էլ ավագ դպրոցներին: Այդ օրերին Պաշտպանին են հասցեագրվել բողոքներ ու ահազանգեր նաև ծնողների կողմից, ովքեր մտահոգված են եղել իրենց երեխաների անվտանգությամբ, ինչպես նաև դասապրոցեսների խաթարմամբ: Բողոքների ուսումնասիրությամբ պարզվել էր, որ այս մտավախություններից ելնելով՝ ծնողները նախընտրում էին երեխաներին այս օրերին դպրոց չտանել կամ չուղարկել: Ավելին, այդ օրերին հավաքի մասնակիցների և Ոստիկանության միջև առանձին դեպքերում տեղի ունեցող հրահրումներն ու Ոստիկանության կողմից անձանց մեկուսացնելու կամ բերման ենթարկելու դեպքերն առավել ամրապնդում էին ծնողների մտահոգությունները, որոնց առջև երեխաների անվտանգությունն ապահովելու պարտականություն է կրում պետությունը՝ ի դեմս ուսումնական հաստատության տնօրինության և ուսուցչական կազմի»[11]:

Ուսումնասիրելով ստեղծված իրավիճակը՝ Մարդու իրավունքների պաշտպանը գալիս է այն եզրակացության, որ «....իսկապես առկա է երեխաների իրավունքների իրացման, այդ հարցում ծնողների, երեխաների անվտանգության կամ կրթական հաստատության պատասխանատու ներկայացուցիչների պարտականությունների և պատասխանատվության ճիշտ ընկալման խնդիր»:

Մի կողմից երեխաներն ունեն խաղաղ, այդ թվում՝ քաղաքական բնույթ կրող, հավաքներին գիտակցված մասնակցելու իրավունք, որոշումների կայացման գործընթացներին մասնակցության և դրանց վրա ներազդելու իրավունք: Մյուս կողմից, առկա է ‹‹երեխայի զարգացող հնարավորությունների›› գաղափարը, ըստ որի՝ երեխայի զարգացմանը զուգահեռ մեծանում է սեփական իրավունքներն ինքնուրույն իրացնելու նրա կարողությունը: Բացի այդ, ըստ միջազգային իրավական մոտեցումների, երեխայի մասնակցությունն իսկական չէ (non-genuine participation), եթե վերջինս հնարավորություն չունի հասկանալու իր արտահայտած կարծիքի ազդեցությունն ու հետևանքները, ինչպես նաև՝ երբ երեխայի մտահոգություններն ու առաջարկությունները քննության առարկա չեն դառնում [12]: Այս և մի շարք այլ հանգամանքների հիման վրա՝ Մարդու իրավունքների պաշտպանը եզրահանգում է.

- «երեխայի իրավունքներն առաջնահերթ են ցանկացած իրավիճակում. որևէ իրավունքի կամ ազատության իրականացում չի կարող իբրև արդարացում վկայակոչվել, եթե այն սպառնում է երեխայի անվտանգությանն ու պաշտպանվածությանը,
- պետության, հասարակության և յուրաքանչյուր չափահաս քաղաքացու պարտականությունն է զերծ պահել երեխաներին ցանկացած գործընթացի մեջ ներքաշվելուց՝ առանց վերջիններիս՝ գործընթացին մասնակցության նպատակի և դրա հնարավոր հետևանքների բավարար գիտակցման: Առավել ևս խնդրահարույց է, երբ դպրոցահասակ երեխաները թիրախավորվում են քաղաքական բնույթ կրող գործընթացներին մասնակցելու համար,
- երեխայի հավաքների ազատության իրավունքի իրացման հարցը գնահատելիս պարտադիր է երեխայի լավագույն շահով ղեկավարվելը՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակի հանգամանքները: Երեխայի իրավունքների իրացման անհրաժեշտ նախապայմաններն են՝ երեխայի տեղեկացված մասնակցության սկզբունքը, իր տարիքին և հասունությանը համապատասխան իրավունքների իրացումը, ծնողների և օրենքով երեխայի համար պատասխանատու անձանց կարևոր դերակատարությունն ու պատասխանատվությունն իր իրավունքներն իրականացնելիս երեխային ուղղություն տալու հարցում և այլն,

10 «Բռնության բոլոր ձևերից ազատ լինելու մասին» Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 13 ընդհանուր մեկնաբանության (2011), կետ 61:

11 Տե՛ս «2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում, էջ 370-374, https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

12 Տե՛ս www.slideshare.net/renewvipolitics/unicef-crc-right-to-participation, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

- երեխայի իրավունքների իրացումը որևէ դեպքում չի կարող ինքնանպատակ լինել. այն պետք է ուղղված լինի հենց երեխայի՝ հասարակական կյանքին լիարժեք ներգրավվածության ապահովմանը,

- դպրոցում գտնվող երեխաների համար պատասխանատու անձանց՝ տնօրենի և ուսուցչական կազմի, ինչպես նաև ոստիկանության ներկայացուցիչների գործողությունները պետք է բացարձակապես ուղղված լինեն երեխաների անվտանգությունն ապահովելուն. նրանք առաջնահերթ պատասխանատու են երեխաներին իրենց վստահած ծնողների առջև,

- խաղաղ հավաքներին մասնակցության իրավունքի իրացում չէ, երբ դպրոցներ ինքնակամ մուտք գործելու փորձերով երեխաներին քաղաքական բնույթ կրող հավաքի կամ երթի ներգրավելու նպատակով նրանց բաց թողնելու պահանջներ են ներկայացվում առանց ծնողների տեղեկացվածության ու համաձայնության, ինչպես նաև առանց հաշվի առնելու տնօրենների ու ուսուցիչների պահանջները,

- միևնույն ժամանակ, խոսք չի կարող լինել բավարար տարիքային հասունություն և գիտակցված կամահայտնություն ցուցաբերած անչափահասների հավաքների ազատության իրավունքի սահմանափակման մասին: Խնդիրն այլ է, երբ այդպիսի գործընթացներին մասնակցության կոչերը հնչում են հանրակրթական դպրոցներում՝ դասադուլ իրականացնելու քարոզով, ինչպես նաև մասնակից դարձնելով ցածր տարիքի դպրոցահասակ երեխաների: Նման պայմաններում առաջնահերթ է դառնում երեխաների անվտանգության ապահովման ու նրանց պաշտպանվածության, բնականոն կրթական պրոցեսի ապահովման հարցը»:

Այս օրինակի միջոցով տեսնում ենք, որ երեխայի լավագույն շահերի գնահատումը կատարվում է յուրաքանչյուր առանձին դեպքի առանձին քննության արդյունքում:

Հարց. Իսկ ի՞նչ պետք է հաշվի առնել երեխայի լավագույն շահերը գնահատելիս:

Երեխաների իրավունքների կոմիտեն առաջարկում է երեխայի լավագույն շահերը գնահատելիս ու որոշելիս նկատի ունենալ հետևյալ տարրերը.

- **Երեխայի հայացքները**
  Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքն իրեն վերաբերող բոլոր որոշումներում («Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 12).

- **Երեխայի ինքնությունը**
  Երեխայի ինքնությունը ներառում է այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ազգային ծագումը, դավանանքն ու համոզմունքները, մշակութային յուրօրինակությունը և այլն: Ինքնության պահպանման իրավունքը երաշխավորված է Կոնվենցիայի 8-րդ հոդվածում և պետք է հարգվի երեխայի լավագույն շահերը գնահատելիս.

- **Ընտանեկան միջավայրի ու հարաբերությունների պահպանումը**
  Չափազանց կարևոր է գնահատել երեխայի շահերը նրան ծնողներից բաժանելիս: Ծնողներից բաժանումը կատարվում է ծայրահեղ դեպքում, եթե դա անհրաժեշտ է երեխայի լավագույն շահերի ապահովման տեսանկյունից.

- **Երեխայի խնամքը, պաշտպանությունն ու անվտանգությունը**
  «Խնամք ու պաշտպանություն» ասվածը պետք է հասկանալ լայն իմաստով. երեխային պաշտպանելու նպատակը ոչ միայն նրան վնասից, բռնությունից զերծ պահելն է, այլև նրա բարեկեցության ու զարգացման ապահովումը, նրա նյութական, ֆիզիկական, կրթական ու հուզական պահանջների, սիրո ու խնամքի պահանջի բավարարումը.

- **Խոցելի վիճակը**
  Երեխայի վիճակը խոցելի է, եթե նա ունի հաշմանդամություն, պատկանում է որևէ փոքրամասնության, փախստական է կամ ապաստան հայցող, անապաստան է կամ շահագործման զոհ և այլ դեպքերում: Խոցելի վիճակում գտնվող յուրաքանչյուր երեխա անհատական մոտեցում է պահանջում, մասնագետները պետք է յուրաքանչյուր առանձին դեպքում հաշվի առնեն յուրաքանչյուր երեխայի խոցելիության բնույթն ու աստիճանը.

- **Առողջության պահպանման իրավունքը**
  Երեխայի առողջության պահպանման իրավունքը ((«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, հոդված 24) և նրա առողջական վիճակը լավագույն շահերի գնահատման կարևորագույն տարր են:

- **Երեխայի կրթության իրավունքը**
  Երեխայի լավագույն շահերը գնահատելիս պետք է հաշվի առնել որակյալ կրթություն ստանալու նրա իրավունքը:

Այս բոլոր տարրերը, իհարկե, հավասարապես կիրառելի չեն բոլոր դեպքերում: Յուրաքանչյուր առանձին դեպքում, կախված կոնկրետ հանգամանքներից, կարող են լինել ավելի կամ պակաս կարևոր տարրեր:

Այժմ, երբ բավականաչափ գիտելիքներ ունենք երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու սկզբունքի մասին, երբ գիտակցեցինք դրա կարևորությունն ու առաջնահերթությունը երեխային վերաբերող որոշումների կայացման գործընթացում, փորձենք վերլուծել ներկայացված իրավիճակը և պատասխանել դրանց հաջորդող հարցին:

Իրավիճակ

Քույր (5 տարեկան) և եղբայր (9 տարեկան) բնակվում են տատիկի ու քեռու տանը: Մայրը մահացել է սրտի հիվանդությունից: Երեխաները հիշում են, թե ինչպես էր իրենց հայրը հաճախ բռնություն կիրառում իրենց մոր նկատմամբ: Ներկայումս երեխաները չեն շփվում հոր հետ, մինչդեռ հայրը պահանջում է վերադարձնել երեխաներին, որպեսզի բնակվեն իր հետ: Հայրը դիմել է խնամակալության և հոգաբարձության համայնքային մարմնին: Վերջինս, վկայակոչելով երեխաների լավագույն շահերը, եզրակացությամբ որոշել է երեխաներին ժամանակավորապես տեղավորել կացարանում, որպեսզի հայրը հնարավորություն ունենա այցելելու նրանց: Համայնքային մարմինն այդ եզրակացության հիման վրա կայացրել է որոշում երեխաների կացարանում տեղավորելու մասին: Խնամակալության մարմնի եզրակացության և վարչական մարմնի որոշման մեջ վերլուծություն չի կատարվել, թե արդյոք կացարանը երեխաների համար տվյալ պահին լավագույն միջավայրն է: Ավելին, թեև եզրակացության ու որոշման մեջ հղում է արվել երեխաների լավագույն շահերին և նույնիսկ վկայակոչվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի որոշում, սակայն բացակայում է փաստերի, սկզբունքների վերլուծությունը, հետևաբար, հղումները կատարվել են վերացական կերպով: Ընդ որում, որոշումը կայացվել է առանց երեխաների կարծիքը լսելու: Երբ երեխաները տեղեկացվել են կացարան տեղափոխելու որոշման մասին, նրանք արտասվել են ու նշել, որ չեն ցանկանում գնալ մանկատուն[13]:

Հարց. Ի՞նչ որոշում պետք է կայացվեր՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու սկզբունքը: Ի՞նչ թերացումներ եք նկատում երեխայի լավագույն շահերի գնահատման ու որոշման գործում:

13 Իրավիճակը մեջբերվում է ըստ «Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցի, Ե., 2018, էջ 40, 41՝ http://old.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/25916e056fa49cb25bdba4ffde02141f.pdf, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

Լսված լինելու իրավունքը[14]

«Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը,երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում»:

ՀՀ Սահմանադրություն
37-րդ հոդվածի 1-ին մաս

«Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն: Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ, ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով, ունկնդրվել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով»:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա
հոդված 12

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածն ամրագրում է երեխայի իրավունքն ազատորեն արտահայտելու իր կարծիքն իրեն վերաբերող բոլոր դեպքերում: Սակայն կարծիքի արտահայտումը պասիվ գործընթաց չէ. երեխայի կարծիքը պետք է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության արժանանա: Երեխայի այս իրավունքից բխում է Կոնվենցիայի մասնակից պետությունների պարտավորությունն ապահովելու երեխայի կարծիքի ազատ արտահայտումը և պատշաճ ուշադրություն դարձնելու այդ կարծիքին: Բոլոր երեխաների՝ լսված լինելու և լրջորեն ընդունվելու իրավունքը Կոնվենցիայի ուղենիշային սկզբունքներից է, ինչը նշանակում է որ Կոնվենցիայի 12-րդ հոդվածը ոչ միայն ճանաչում է մեկ կոնկրետ իրավունք, այլև պետք է հաշվի առնվի երեխայի բոլոր իրավունքների մեկնաբանման և իրականացման ժամանակ:

Աշխարհի տարբեր երկրներում այսօր էլ երեխաները դժվարությունների են հանդիպում իրենց վերաբերող բոլոր հարցերի շուրջ իրենց կարծիքն ազատորեն արտահայտելու և այդ կարծիքն արտահայտելիս պատշաճ ուշադրության արժանանալու իրավունքի հարցում: Լսված լինելու իրավունքի իրականացման ճանապարհին դժվարություններ կարող են ստեղծել ինչպես հասարակության մեջ տարածված կարծրատիպերն ու նախապաշարմունքները, այնպես էլ քաղաքական ու տնտեսական խոչընդոտները: Մեր հասարակության մեջ էլ երեխաները հաճախ են լսում, որ «չպետք է խառնվեն մեծերի գործերին», որ «կան բաներ, որոնք փոքրերին չեն վերաբերում», մեր պետությունն էլ հաճախ կայացնում է երեխաներին վերաբերող որոշումներ՝ առանց նրանց կարծիքը լսելու: Եվ ուրեմն՝ կարիք ունենք ավելի լավ հասկանալու երեխայի լսված լինելու իրավունքի էությունը և հստակեցնելու մեր՝ որպես պետության ու հասարակության հետագա անելիքները:

Նախ՝ եկեք փորձենք հասկանալ 12-րդ հոդվածում օգտագործված բոլոր եզրույթների իմաստը:

Մասնակից պետություններն ապահովում են

Ապահովել բառն ունի հատուկ իրավաբանական ուժ, այն ոչինչ չի թողնում մասնակից պետության հայեցողությանը, այլ դնում է նրա վրա պարտականություն ձեռնարկելու անհրաժեշտ բոլոր միջոցները բոլոր երեխաների լսված լինելու իրավունքը լիարժեքորեն իրականացնելու համար: Այդ պարտականությունը ենթադրում է երկու քայլ՝

- պահովել երեխայի կարծիքը պարզելու անհրաժեշտ մեխանիզմները.
- պատշաճ ուշադրություն դարձնել այդ կարծիքին:

Իր հայացքները ձևակերպելու ընդունակ

Այս արտահայտությունը պետք է ընկալվի ոչ թե որպես սահմանափակում, այլ, ավելի շուտ, որպես մասնակից պետության պարտավորություն հնարավոր առավելագույն

14 Կոնվենցիայի այս ուղենիշային սկզբունքը ներկայացվում է ըստ «Երեխայի լսված լինելու իրավունքի վերաբերյալ» Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 12 ընդհանուր մեկնաբանության (2009):

չափով գնահատելու երեխայի՝ իր հայացքներն ինքնուրույն ձևակերպելու ունակությունը: Սա նշանակում է, որ պետությունը պետք է ելնի այն կանխադրույթից, որ երեխան ունակ է ձևակերպելու իր հայացքները և իրավունք ունի արտահայտելու դրանք. երեխան պարտավոր չէ ապացուցել իր հայացքները ձևակերպելու ունակությունը:

12-րդ հոդվածում չենք հանդիպում տարիքային որևէ սահմանափակման, հետևաբար՝ մասնակից պետությունները պետք է խուսափեն թե՛ օրենքներում, թե՛ երեխաներին վերաբերող գործնական որոշումներում տարիքային սահմանափակումներ դնելուց և չխոչընդոտեն որևէ տարիքի դեռ չհասած երեխաների լսված լինելու իրավունքի իրականացումը:

Հարց. ՀՀ օրենսդրության մեջ հանդիպե՞լ եք երեխայի լսված լինելու իրավունքի իրականացման տարիքային սահմանափակումների: Ո՞ր տարիքն է երբեմն հիշատակվում: Իսկ գիտե՞ք ինչ քայլեր են ձեռնարկվել տարիքային սահմանափակումը հաղթահարելու համար:

ՀՀ օրենսդրության մեջ, մասնավորապես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքում (հոդված 44) հանդիպում ենք տարիքային սահմանափակման. որոշակի հանգամանքներում երեխայի կարծիքը լսելը պարտադիր է, եթե լրացել է նրա 10 տարին: Տարիքային սահմանափակումը հակասում է Կոնվենցիայի 12-րդ հոդվածին: Պետք է նշել, սակայն, որ գործող Սահմանադրության և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում երեխայի լսված լինելու իրավունքի իրականացման տարիքային սահմանափակումներ չկան, իսկ Ընտանեկան օրենսգրքի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի փոփոխությունից հետո 44-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ. «....երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում», ինչով էլ մասամբ հաղթահարվում է օրենսգրքի 44-րդ հոդվածի և Կոնվենցիայի 12-րդ հոդվածի հակասությունը:

Ազատորեն արտահայտելու այդ հայացքները

«Ազատորեն» նշանակում է, որ երեխան պետք է արտահայտի իր կարծիքն առանց որևէ ճնշման, արտահայտի ի՛ր, այլ ոչ թե ուրիշների կարծիքը: Երեխայի կարծիքն իմանալու համար պետք չէ նրան անընդհատ հարցախեղդ անել: Անհրաժեշտ է միայն տեղեկացնել երեխային իր իրավունքի մասին. նա ինքը կորոշի՝ օգտվել լսված լինելու իր իրավունքից, թե ոչ: Երեխան չպետք է ենթարկվի մանիպուլյացիաների կամ դառնա որոշակի ազդեցության ու ճնշումների օբյեկտ:

Մասնակից պետությունները պետք է ստեղծեն պայմաններ երեխայի կարծիքի արտահայտման համար՝ հաշվի առնելով երեխայի անհատական ու սոցիալական դրությունը, և ստեղծեն միջավայր, որում երեխան կզգա, որ իր հայացքներն արտահայտելիս ինքը հարգված է ու անվտանգ:

©UNICEF Armenia/2020/Avagyan

Երեխային վերաբերող բոլոր դեպքերում

Սահմանված չէ դեպքերի կոնկրետ շրջանակ, որում պետք է լսել ու պատշաճ ուշադրություն դարձնել երեխայի կարծիքին: Յուրաքանչյուր դեպքում, երբ քննարկվող հարցը վերաբերում է երեխային, երեխան պետք է կարողանա արտահայտել իր կարծիքը:

Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն

Այստեղ արվում է երկու շեշտադրում: Նախ՝ ընդգծվում է, որ երեխայի կարծիքի արտահայտումն ինքնանպատակ չէ. մասնակից պետությունը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի դրան: Երկրորդ՝ խոսելով «տարիքի ու հասունության» մասին՝ ևս մեկ անգամ շեշտվում է, որ կենսաբանական տարիքը երեխայի՝ իր հայացքները ձևակերպելու ունակության և այդ հայացքների կշռի չափման միակ միավորը չէ: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում երեխայի հայացքները պետք է գնահատվեն առանձին՝ վերլուծելով երեխայի անհատական առանձնահատկությունները:

«Երեխայի հասունություն» եզրույթը դժվար է սահմանել. 12-րդ հոդվածի համատեքստում հասունությունը երեխայի՝ այս կամ այն հարցի շուրջ իր հայացքները հստակ ու ինքնուրույն ձևակերպելու և այդ հարցի հետևանքները հասկանալու և գնահատելու ունակությունն է: Որքան քննարկվող հարցն ավելի մեծ չափով կարող է ազդել երեխայի կյանքի վրա, այնքան ավելի լավ պետք է կարողանանք գնահատել երեխայի հասունությունը: Այստեղ չպետք է նաև մոռանալ «երեխայի զարգացող հնարավորությունների» գաղափարը, ըստ որի՝ երեխայի զարգացմանը զուգահեռ մեծանում է սեփական իրավունքներն ինքնուրույն իրացնելու նրա կարողությունը: Եթե երեխայի ունակությունների անհատական գնահատումը ցույց է տալիս, որ երեխան ի վիճակի է հստակ ու ինքնուրույն ձևակերպելու իր կարծիքը, ապա այդ կարծիքը պետք է համարվի էական գործոն երեխային առնչվող հարցը լուծելիս:

Իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական վարույթի ժամանակ

Երեխան պետք է լսված լինի իրեն վերաբերող բոլոր դատական կամ վարչական վարույթների ժամանակ: Վարույթը կարող է առնչվել այնպիսի հարցերի, ինչպիսիք են ծնողների ամուսնալուծությունը, խնամակալությունը, որդեգրումը, երեխայի ենթարկումը ֆիզիկական ու հոգեբանական բռնության, սեռական ոտնձգությունների կամ այլ հանցագործությունների, երեխայի՝ օրենքի հետ կապված խնդիրներ ունենալը, երեխայի առողջության ապահովումը, սոցիալական ապահովումը, երեխայի փախստական լինելը, ապաստան հայցող ծնողներ ունենալը, զինված հակամարտության զոհ լինելը և այլն:

Դատական կամ վարչական վարույթները պետք է կազմակերպվեն՝ ելնելով երեխայի լավագույն շահերից: Երեխայի կարծիքը լսելն արդյունավետ չի լինի, եթե նա լինի վախեցած և արտահայտի այն թշնամական մթնոլորտում: Մթնոլորտը պետք է լինի բարենպաստ, երեխան պետք է համոզված լինի, որ իրեն լսելու պատասխանատվություն ունեցող անձն իսկապես ուզում է լսել իրեն և լրջորեն է վերաբերվում իր ասածներին:

Լսված լինել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով

Այն բանից հետո, երբ երեխան կայացնում է լսված լինելու իր իրավունքից օգտվելու որոշումը, նա պետք է տեղեկացվի, որ կարող է արտահայտել իր կարծիքը անմիջականորեն կամ ներկայացուցչի միջոցով: Երեխան ինքն է ընտրում իր կարծիքն արտահայտելու եղանակը:

Երեխայի ներկայացուցիչը կարող է լինել ծնողներից մեկը, փաստաբանը կամ որևէ այլ անձ, մասնավորապես՝ սոցիալական ծառայության աշխատակիցը: Մասնակից պետությունը պետք է մշակի երեխայի ներկայացուցչի վարքագծի կանոններ: Ներկայացուցիչը պետք է հստակ հասկանա, որ ներկայացնում է բացառապես երեխայի շահերը և պարտավոր է որևէ կերպ չխեղաթյուրել երեխայի կարծիքը: Ցանկացած պարագայում նախընտրելի է, որ երեխան արտահայտի իր հայացքներն անմիջականորեն:

Ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով

Այս դրույթը չի կարող նշանակել, որ պետությունը կարող է ունենալ այնպիսի ներպետական դատավարական օրենսդրություն, որով կսահմանափակվի երեխայի լսված լինելու իրավունքի իրականացումը: Ընդհակառակը՝ մասնակից պետություններին առաջարկվում է մշտապես պահպանել արդար դատավարության հիմնական սկզբունքները:

Դատական կամ վարչական քննությունների ժամանակ երեխան՝ լսված լինելու իր իրավունքի խախտման դեպքում պետք է ունենա բողոքարկման ու վիճարկման հնարավորություն:

Որպես Կոնվենցիայի ուղենիշային սկզբունք՝ լսված լինելու իրավունքն ուղղակիորեն կապված է Կոնվենցիայի մյուս սկզբունքների հետ:

Լսված լինելու իրավունքը և երեխայի լավագույն շահերը

Հնարավոր չէ առաջնորդվել երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու սկզբունքով՝ առանց ապահովելու երեխայի լսված լինելու իրավունքի իրականացումը: Մի կողմից՝ պնդելով, որ երեխայի նկատմամբ բոլոր գործողություններում պետք է առաջնահերթ ուշադրություն դարձվի երեխայի լավագույն շահին, իսկ, մյուս կողմից, ճանաչելով երեխայի՝ իրեն վերաբերող բոլոր դեպքերում լսված լինելու իրավունքը՝ Կոնվենցիայում ընդգծվում է, որ երեխայի կարծիքը կարևորագույն նշանակություն ունեցող հանգամանք է երեխայի լավագույն շահերի գնահատման ժամանակ:

Լսված լինելու իրավունքը

Լսված լինելու իրավունք ունեն բոլոր երեխաները՝ առանց որևէ խտրականության: Երեխաների իրավունքների կոմիտեն կոչ է անում մասնակից պետություններին առանձնակի ուշադրություն դարձնել աղջիկների և հաշմանդամություն ունեցող երեխաների լսված լինելու իրավունքի լիարժեք իրականացմանը:

Ինչպես արդեն նշեցինք՝ երեխան ունի լսված լինելու իրավունք իրեն վերաբերող բոլոր դեպքերում: Արդեն նկատեցինք, որ երեխայի կարծիքը պարտադիր է հաշվի առնել նրան վերաբերող դատական ու վարչական վարույթների ժամանակ: Սակայն ոչ պակաս կարևոր է ապահովել լսված լինելու իրավունքը նաև առօրյա հարցերում: Երեխան պետք է կարողանա արտահայտել իր կարծիքը տանը, ընտանեկան բոլոր կարևոր որոշումների կայացման ժամանակ: Երեխայի կարծիքը պետք է լսելի լինի, երբ ծնողները, երեխայի տարիքին ու հասունությանը համապատասխան, որոշում են, թե որ դպրոցում նա պետք է սովորի, ինչ բժշկական ծառայություններից պետք է օգտվի, ինչ բուժում ստանա, ինչ սպորտի հաճախի, ինչ երաժշտական գործիք նվագի, նվագի, թե ոչ, հաճախի մասնավոր պարապմունքների, թե ոչ, ինչպես պետք է անցկացնի հանգիստը և այլն: Շատ կարևոր է երեխայի մասնակցությունը համայնքային կյանքին: Երեխաների կարծիքը պետք է հաշվի առնվի, երբ, օրինակ, նրանց համար նոր խաղահրապարակ կամ մշակութային կենտրոն է բացվում: Երեխայի կարծիքը պետք է լսելի լինի նաև դպրոցում:

Հարց. Ձեր համայնքում երեխաները կարողանո՞ւմ են ազատորեն արտահայտել իրենց կարծիքն իրենց վերաբերող համայնքային հարցերում: Նրանց կարծիքը հաշվի առնվո՞ւմ է:

Երեխայի լսված լինելու իրավունքի իրացումը դպրոցում

Դպրոցում ամեն օր կայացվում են որոշումներ, որոնք վերաբերում են երեխաներին, ուստի շատ կարևոր է, որպեսզի երեխաները լինեն դպրոցում լսված: Ուսումնական հաստատությունները կարող են նաև մեծ դեր ունենալ երեխայի՝ իր հայացքները հստակ ու ինքնուրույն ձևակերպելու կարողության զարգացման հարցում:

Երեխաները պետք է հնարավորություն ունենան մասնակցելու դասարանական որոշումների կայացմանը. նրանց կարծիքը պետք է լսելի լինի, երբ սահմանվում են աշակերտների վարքագծի կանոնները, երբ վերանորոգվում ու ներկվում են դասարանի պատերը, երբ ուսուցիչներն ընտրում են դասավարման այս կամ այն մեթոդը:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, Հայաստանի դպրոցներում ևս երեխաների կարծիքը լսելի դարձնելու կարևոր գործիքներից մեկն աշակերտական խորհուրդներն են: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ աշակերտական խորհրդի անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են ուսումնական հաստատության կառավարմանը (հոդված 10, մաս 6): ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի մայիսի 17-ի N 571-Ն հրամանով էլ հաստատվել է աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը, որով սահմանվել է աշակերտական խորհուրդի իրավասությունների բավականին լայն շրջանակ (գլուխ VII, կետ 39):

Աշակերտական խորհուրդը՝

- խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է հաստատության կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին՝ սովորողներին վերաբերող ուսուցման բովանդակության, գիտելիքների յուրացման որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկումներին.
- կարծիք է ներկայացնում հաստատության մանկավարժական խորհրդին՝ առանձին դեպքերում հաստատության ներքին կարգապահական կանոնները խախտելու համար սովորողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու վերաբերյալ.
- կարող է ստեղծել մանկապատանեկան ակումբներ և աջակցում է դրանց աշխատանքների կազմակերպմանը.
- մասնակցում է համայնքին օժանդակող ծրագրերի իրականացմանը.
- արձագանքում և իր իրավասությունների սահմաններում ընթացք է տալիս սովորողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին ու դիմումներին.
- աշխատանքներ է տանում սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ.
- աջակցում է հաստատության կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և տնօրենության կողմից սովորողներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանը:

Աշակերտական խորհուրդը մի շարք հարցերի շուրջ կարող է առաջարկություններ ներկայացնել տնօրինությանը:

Այդուհանդերձ՝ հանրապետության դպրոցներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշակերտական խորհուրդները հիմնականում ունեն ձևական բնույթ, դրանց գործունեությունը սահմանափակվում է տարաբնույթ միջոցառումներ կազմակերպելով, դրանք հազվադեպ են իրապես մասնակցում ուսումնական հաստատության կառավարմանն ու համայնքային կյանքին:

Սա նշանակում է, որ թեև օրենդրական մակարդակում ամրագրվել է դպրոցում երեխաների լսված լինելու իրավունքը, սակայն անհրաժեշտ են գործնական քայլեր ու ջանքեր այդ իրավունքն իրապես իրականացնելու համար:

Հարց. Ձեր դպրոցում աշակերտական խորհուրդը երբևէ մասնացե՞լ է կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին: Դուք՝ որպես ուսուցիչ, ի՞նչ կարող եք անել աշակերտական խորհուրդի գործունեության աշխուժացման համար:

Վերջում դարձյալ առաջարկում ենք վերլուծել ներկայացված իրավիճակը և պատասխանել դրան հաջորդող հարցերին:

Իրավիճակ

Արան 15 տարեկան է: Նա գանգատվում էր կոկորդի ցավից: Արայի բժիշկն ասաց, որ կարիք կա հեռացնելու նրա նշիկները: Բժիշկն ասում է, որ Արայի մայրը պետք է տա բժշկական միջամտության համաձայնություն: Երբ Արան ասում է, որ ինքը 15 տարեկան մեծ տղա է և իրեն նույնպես պետք է հարցնեն միջամտությունից առաջ, բժիշկն ասում է, որ օրենքով, եթե բժշկական միջամտությունն անհրաժեշտ է 18 տարին չլրացած հիվանդին, ապա համաձայնություն պետք է տա օրինական ներկայացուցիչը:

Հարց. Ըստ Ձեզ՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի՝ վերը բերված դրույթը (հոդված 8) խախտո՞ւմ է երեխայի լսված լինելու իրավունքը: Եթե այո, ապա ինչո՞ւ և ինչպե՞ս:

Օգտակար հղումներ

ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի մայիսի 17-ի ««Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 571-Ն հրաման՝ www.arlis.am/DocumentView.aspx?docID=69283

«Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց, Եր. 2018՝ http://old.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/25916e056fa49cb25bdba4ffde02141f.pdf, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

©UNICEF Armenia/2020/ Galstyan

4. Երեխայի պաշտպանությունը

Երեխայի իրավունքների պաշտպանությունը ներառում է Կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքների պաշտպանությունը, իսկ երեխայի պաշտպանություն ասելով հասկանում ենք այն, որ՝

- երեխան, ծնողների ցանկությանը հակառակ, չպետք է բաժանվի նրանցից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները, գործող օրենքի և ընթացակարգի համաձայն, կայացնեն որոշում, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսանկյունից (հոդված 9, մաս 1).

- երեխան պետք է պաշտպանված լինի ծնողների, օրինական խնամակալների կամ իր մասին հոգ տանող ցանկացած անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից՝ ներառյալ սեռական չարաշահումը (հոդված 19, մաս 1).

- երեխան պետության կողմից տրամադրվող հատուկ պաշտպանության և օգնության իրավունք ունի այն դեպքում, երբ ժամանակավորապես կամ մշտապես զրկվել է իր ընտանեկան շրջապատից կամ չի կարողանում մնալ այդ շրջապատում (հոդված 20, մաս 1).

- երեխան պետք է որդեգրվի այն դեպքում, երբ պետությունն ապահովում է, որ երեխայի որդեգրումը թույլատրվի միայն իրավասու մարմինների կողմից, որոնք, կիրառվող օրենքի և ընթացակարգի համաձայն և գործին առնչվող ողջ հավաստի տեղեկատվության հիման վրա, կորոշեն որդեգրման թույլատրելիությունը (հոդված 21, մաս (ա)).

- երեխան, որն ունի մտավոր կամ ֆիզիկական խեղումներ, պետք է ապրի լիարժեք և արժանավայել կյանքով այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրա արժանապատվությունը, նպաստում են ինքնավստահությանը և դյուրացնում են նրա ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքում (հոդված 23, մաս 1).

- երեխան պետք է պաշտպանված լինի տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել նրա կրթությունը կամ վնասել նրա առողջությունը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացումը (հոդված 32, մաս 1).

- երեխան պետք է պաշտպանված լինի թմրանյութերի և հոգեներգործուն նյութերի ապօրինի օգտագործումից և այդպիսի նյութերի ապօրինի արտադրության ու առևտրի մեջ ներգրավված լինելուց (հոդված 33).

- երեխան պետք է պաշտպանված լինի սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումից, առևանգումից և վաճառքից: Պետությունը պարտավոր է երեխային պաշտպանել նրա բարեկեցությանը որևէ տեսանկյունից վնասող շահագործման բոլոր ձևերից (հոդված 34, 35).

- երեխան պետք է պաշտպանված լինի զինված հակամարտություններից: Պետությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նպաստելու դաժան վերաբերմունքի, շահագործման կամ չարաշահման ցանկացած ձևի, խոշտանգումների կամ ցանկացած այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, զինված ընդհարումների զոհ դարձած երեխայի ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնմանը և սոցիալական վերաինտեգրմանը (հոդված 39:

Հարց. Ի՞նչ եք կարծում, ինչու է պետք մեզ՝ ուսուցիչներիս, իմանալ այս ամենի մասին: Ինչպե՞ս կարող ենք մենք օգնել երեխաներին նրանց իրավունքների պաշտպանության հարցում

Այժմ խոսենք մի տարածված երևույթի մասին:

Բուլինգ

Ծաղրանքն ու ստորացումները վաղուց են դարձել դպրոցական կյանքի անբաժանելի մաս և տարիների հետ այս երևույթն ավելի ու ավելի է տարածվում: Արևմուտքում այս երևույթն անվանում են բուլինգ: Շատ ծնողներ կարծում են, որ դա այնքան էլ լուրջ խնդիր չէ, ինչպես, օրինակ, ծխելը, խմիչք օգտագործելը, սակայն բուլինգի հետևանքները ևս կարող են լինել շատ ծանր ու անշրջելի: Բուլինգը բացասաբար է անդրադառնում ոչ միայն դրան ենթարկված երեխաների, այլև՝ այն իրականացնողների վրա: Բուլինգի են ենթարկվում հիմնականում այն երեխաները, որոնք՝

- չունեն ծնողներ,
- ժամանակավորապես կամ մշտապես զրկված են ընտանեկան միջավայրից,
- ընտանիքում ենթարկվում են ֆիզիկական կամ հոգեկան բռնության, շրջապատված չեն հոգատարությամբ ու ուշադրությամբ,
- ենթարկվում են տնտեսական շահագործման,
- ունեն ցածր ինքնագնահատական և ագրեսիվ են,
- որևէ կերպ՝ արտաքնով, հասակով, ֆիզիոլոգիական առանձնահատկություններով, առանձնանում են ընդհանուրից,
- ֆիզիկապես կամ հուզական տեսանկյունից ավելի թույլ են,
- ինքնավստահ ու համարձակ չեն,
- կախվածություն ունեն ուրիշների կարծիքից:

Բուլինգ իրականացնողներ են համարվում այն երեխաները, որոնք սիրում են նեղացնել ու ստորացնել դասընկերներին, սովորաբար վատ են սովորում, գերակտիվ են, հակված են կոնֆլիկտների ու կռիվների:

Կան բուլինգի դրսևորման մի քանի եղանակ՝

- կիբերբուլինգ, որն իրականացվում է համակարգչի ու համացանցի միջոցով՝ օգտագործելով դրանք որպես վնասելու գործիք,
- ֆիզիկական բուլինգ՝ հրմշտոցի, հարվածների, ծեծի միջոցով,
- վերբալ կամ խոսքային բուլինգ՝ պիտակավորման և ծաղրի միջոցով,

- սոցիալական կամ հոգեբանական բուլինգ, որի դեպքում փորձում են մեկուսացնել երեխային իր շրջապատից և կանխամտածված կերպով բացառում նրան հասարակությունից:

Այժմ եկեք վերլուծենք մի քանի իրավիճակ և փորձենք պատասխանել դրանց հաջորդող հարցերին:

Իրավիճակ 1.

Ես աղջիկ եմ: Սովորում եմ 5-րդ դասարանում: Դասարանի ամենաբարձրահասակ աշակերտն եմ: Մականունս արդեն հայտնի է դպրոցում՝ «բոյլուխ»: Ուսուցիչս այդ մականունով դիմեց ինձ, երբ սեպտեմբերին մտա դասասենյակ, ինչից հետո դասընկերներս սկսեցին ինձ այդպես կանչել: Մեր դասարանում սովորում է 21 աշակերտ: Ինձ նստեցրել են շարքի վերջում՝ ասելով, թե խանգարում եմ մյուսներին տեսնելու գրատախտակը: Ինքս էլ տեսողության խնդիր ունեմ:

Մի անգամ, երբ դասն ավարտվեց, և բոլորը դուրս եկան, մոտեցա ուսուցչուհուս և խնդրեցի տեղափոխել ինձ մի փոքր առաջ, ասացի նաև, որ վատ եմ տեսնում: Պատասխանը հետևյալն էր. «Ոչ մեկին չեմ կարող իր տեղից հանել, իսկ եթե սովորող լինես, առանց տեսնելու էլ կսովորես...»:

Իրավիճակ 2.

Մեր դպրոցի պատմության ուսուցիչը հաճախ է կազմակերպում էքսկուրսիաներ, սակայն ինձ և իմ դասընկերներից երկուսին թույլ չի տալիս մասնակցել: Ամեն անգամ ասում է, որ «միայն լավերը պետք է գնան»:

Իրավիճակ 3.

Ես ապրում եմ պապիկիս հետ:

Սեպտեմբերին, երբ եկանք դպրոց, և դասագրքերը բաժանեցին, մենք դասագրքերի համար վճարելու փող չունեինք: Իմ ուսուցիչը մի քանի անգամ դասարանի ներկայությամբ պնդեց, որ պետք է վճարեմ դասագրքերի համար: Դասերից հետո մոտեցա նրան և խնդրեցի մի փոքր ժամանակ տալ վճարելու համար: Անցավ մի քանի օր, և նա դարձյալ դասարանի ներկայությամբ բղավեց, կարգադրեց ոտքի կանգնել և ասել, թե երբ եմ բերելու փողը, հետո էլ շարունակեց, թե այլևս հարկավոր չէ, ինքը կվճարի մեր փոխարեն, քանի որ դպրոցում արդեն իրենից են պահանջում:

Ուսումնական տարին արդեն ավարտվում է, իսկ ուսուցիչս ամեն առիթով բոլորի ներկայությամբ ծաղրում է ինձ և երեսով տալիս...

Իրավիճակ 4.

Ես սովորում էի գյուղի դպրոցում: Տնային հանձնարարությունները կատարելիս թերանում էի, քանի որ ծնողներս ինձ տանը չէին օգնում: Ինձ նման մեկն էլ կար մեր դասարանում: Մի օր մեր ռազմագիտության ուսուցիչը որոշեց «դաստիարակել» մեզ: Երբ հերթական անգամ սխալ ատասխանեցի նրա տված հարցին, նա բռնեց իմ վերնաշապիկից և հրեց ինձ գրատախտակի կողմը: Գլուխս խփեցի և ընկա գետնին: Դասընկերներս ծիծաղում էին: Նա ոգևորվեց, մի ձեռքով բռնեց պարանոցիցս, բարձրացրեց վերև և նորից գցեց գետնին: Բոլորն արդեն հռհռում էին...

Ես հիմա սովորում եմ ուրիշ դպրոցում: Նոր դպրոցն ավելի հեռու է մեր տնից: Այլևս չեմ ուզում ապրել մեր գյուղում. համադասարանցիներս մեր հարևաններն են...

Իրավիճակ 5.

Ես արդեն 14 տարեկան եմ: Վատ եմ սովորում: Մեր դպրոցում ամեն տարի կազմակերպվում են տարբեր միջոցառումներ: Բոլոր տարիներին դահլիճի դուռը փակել են իմ առջև՝ թույլ չտալով դիտել միջոցառումները, երբեք թույլ չեն տվել նաև մասնակցել դրանց...

Հարց. Վերը ներկայացված իրավիճակներում ինչպե՞ս կարող ենք պաշտպանել երեխային, ի՞նչ կառույցներ գիտենք, ու՞մ կարող ենք դիմել և ինչպե՞ս:

Բառարան

Բուլինգ

Բուլինգն ագրեսիայի պարբերական դրսևորում է որևէ սոցիալական խմբի կողմից տվյալ խմբի որևէ անդամի կամ անդամների նկատմամբ: Բուլինգ են համարվում բանավոր սպառնալիքները, ծաղրը, ֆիզիկական հարձակումները՝ հրելը, ծեծելը և այլն, անձի մեկուսացումը և այլն:

Բուլինգը կարող է լինել ֆիզիկական (հրել, մազերից քաշել, ծեծել), վերբալ (ծաղրել) կամ սոցիալական (բոյկոտ, միտումնավոր մեկուսացում):

Ուշագրավ է, որ ՀՀ օրենսդրության մեջ մինչ օրս ներկայացված չէ բուլինգի սահմանում:

Օգտակար հղումներ

«Երեխաների պաշտպանությունը բռնությունից: Ձեռնարկ վերապատրաստողների և երեխաների պաշտպանության մասնագետների համար», Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ, Եր. 2019՝ https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Child%20violence%20_%20manual_1.pdf

©UNICEF Armenia/2020/Margaryan

5. Երեխայի իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետությունը, 1993 թվականին վավերացնելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, պարտավորվեց իր օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներին:

Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանի Հանրապետությունը ճանաչեց, որ երեխայի անհատականության լիակատար ու բազմակողմանի զարգացումն ապահովելու համար երեխան պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո ու փոխադարձ ըմբռնման մթնոլորտում, պաշտպանված լինի բռնության բոլոր ձևերից և ունենա Կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքները:

Պետության բարեկեցության կարևորագույն նախադրյալներից է երեխաների շահերին նպատակաուղղված պետական քաղաքականությունը:

1996 թվականին ընդունվեց «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որը դարձավ Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտանության համակարգի ձևավորման հիմքը: «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 1-ին հոդվածը հստակ ամրագրեց. «Պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո»:

2002-2003 թվականներին ընդունվեցին երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում առանցքային նշանակություն ունեցող «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը: Առաջին անգամ սահմանվեցին առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական, կազմակերպական հիմքերը, նպատակները, սկզբունքները և ձևերը, ինչպես նաև ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները, անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած հանրաքվեով կատարված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում առաջին անգամ առանձին հոդվածով սահմանվեցին երեխայի իրավունքները:

6. Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստճան համակարգ:

©UNICEF Armenia/2020/Galstyan

Ազգային մակարդակ

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որի նպատակն է նպաստել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը[15]:

Ի՞նչ խնդիրներ են դրված Ազգային հանձնաժողովի առջև

- Աջակցել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանը.
- աջակցել երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի իրականացման և մշակման ապահովմանը.
- վերլուծել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրները և մշակել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ.
- աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանը.
- աջակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական, համայնքային և մասնավոր հաստատությունների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանը:

Ի՞նչ է անում Ազգային հանձնաժողովն իր առջև դրված խնդիրների լուծման համար

- Քննարկում է երեխաների պաշտպանության պետական ռազմավարական ծրագրերը և ապահովում է այդ ծրագրերի մշտադիտարկման իրականացումը.
- առաջարկություններ է ներկայացնում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ.
- քննարկում է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը և ներկայացնում առաջարկություններ դրանց արդյունավետ իրականացման համար.
- ուսումնասիրում է և վերլուծում երեխայի իրավունքների խախտման պատճառներն ու ներկայացնում օրենսդրական առաջարկություն, ինչպես նաև քննարկում է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը և դրանց մասին տալիս եզրակացություն.
- առաջարկություններ է ներկայացնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանության պետական ծրագրերի իրականացման վերաբերյալ.
- ուսումնասիրում է ՀՀ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական և մասնավոր հաստատությունների, ինչպես նաև՝ երեխայի պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը.
- քննարկում և առաջարկություն է ներկայացնում մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների գործունեությանն ուղղված քաղաքացիների դիմումների և բողոքների վերաբերյալ.
- քննարկում է մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների տարեկան ծրագրերի հաշվետվությունները և ներկայացնում առաջարկություններ.
- աջակցում է մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատողների վերապատրաստման գործընթացին:

15 Տե՛ս www.arlis.am/DocumentView.aspx?docid=135648, վերջին անգամ դիտվել է 01.11.2021թ.:

Մարզային մակարդակ

Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժիններ

Մարզային մակարդակում գործում են ՀՀ մարզպետարանների աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժինը:

Բոլոր մարզպետարաններում, իսկ Երևան քաղաքում՝ քաղաքապետարանում, գործում են ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ:

Ի՞նչ խնդիրներ են դրված ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների առջև:

- Ապահովել ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը մարզում.
- աջակցել ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովմանը.
- ապահովել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանությունը և կանխարգելել նման իրավիճակում նրանց հայտնվելը.
- մշակել ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրեր և ապահովել դրանց կատարումը.
- մշակել հակասոցիալական վարք դրսևորած և իրավախախտ անչափահասների համար այլընտրանքային (վերականգնողական) արդարադատության ծրագրեր և ապահովել դրանց կատարումը:

Ի՞նչ են անում ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների իրենց առջև դրված խնդիրների լուծման համար:

- Իրականացնում են ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը մարզերում.
- մշակում և իրականացնում են ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրեր.
- ուսումնասիրում են մարզում կանանց և երեխաների թրաֆիքինգի հիմնահարցերը, հայտնաբերված զոհերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և ՀՀ ոստիկանությանը, մշակում զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրեր, նախարարության միջոցով իրականացնում են մարզերում զոհերի ուղղորդումը համապատասխան գերատեսչություններ և կառույցներ.
- ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ աշխատանքներ է իրականացնում հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) հետ, ովքեր բացասական ներգործություն ունեն իրենց երեխաների վրա.
- իրականացնում են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների (նրանց ընտանիքների) կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, ապահովում նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը, մասնակցում են նրանց անհատական սոցիալական ծրագրի մշակմանը, դրանով նախատեսված միջոցառումների իրականացմանը, խմբային (բազմամասնագիտական) քննարկումներին և վարում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգը.
- ձեռնարկում են երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ, պաշտոնատար անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքի և առողջությանը սպառնալու նրա իրավունքների և շահերի խախտումների տեղեկատվության դեպքերում.
- լուծում են առկա տարաձայնությունները՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը.
- մասնակցում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը.
- մասնակցում են դատական այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքներն ու շահերը.
- երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքերում, խնամակալության և հոգաբարձության մարմնին ցուցաբերում են անհրաժեշտ աջակցություն՝ երեխային ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, վերցնելու և երեխայի ժամանակավոր տեղավորումն անհապաղ ապահովելու հարցում.
- իրականացնում են հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հանրակրթական կամ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում.
- բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի գնահատման արդյունքների եզրակացության հիման վրա վկայագրում են երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը.
- հետևում և աջակցում են վկայագրված կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների՝ ուսումնական հաստատություններ ընդգրկվելու գործընթացին.
- ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ քննարկում են մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրները, անհրաժեշտության դեպքում ուղղորդում են համապատասխան հաստատություններ, պաշտպանում են անչափահասների իրավունքներն ու շահերը.
- իրականացնում են առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, կատարում են առանց ծնողական խնամքի մնացած երեխայի մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի և առանց ծնողական խնամքի

մնացած երեխայի հետագա խնամքը տրամադրելու վերաբերյալ սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) տրամադրած նախնական եզրակացության լրիվ, օբյեկտիվ և համակողմանի ուսումնասիրություն և ստացված փաստաթղթերի ու տեղեկատվության համադրման, վերլուծության արդյունքում կազմում եզրակացություն՝ երեխայի հետագա խնամքը տրամադրելու մասին.

- դատարան են ներկայացնում ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ դիմումները.
- աջակցում են երեխաների ծննդյան վկայականների ձեռքբերմանը՝ դրանց բացակայության դեպքերում.
- բաժնի գործունեության մասին տարեկան հաշվետվություն են ներկայացնում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին և մարզպետին.
- իրականացնում են ուսումնասիրություններ և ներկայացնում են տեղեկություններ և եզրակացություններ կապված երեխայի այլընտրանքային խնամքի հետ, ինչպես նաև իրականացնում են այլ լիազորություններ:

©UNICEF Armenia/2020/Galstyan

Համայնքային մակարդակ

Խնամակալության և հոգաբարձության մարմիններ և հանձնաժողովներ

Խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են: Երևանում խնամակալության և հոգաբարձության մարմնին վերապահված լիազորությունները քաղաքապետի անունից իրականացնում են Երևանի վարչական շրջանների ղեկավարները:

Ի՞նչ խնդիրներ են դրված խնամակալության և հոգաբարձության մարմինների առջև:

- Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը.
- երեխայի՝ ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումը.
- կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ նրանց հրատապ օգնության, անհրաժեշտության դեպքում նաև անհապաղ տեղավորման ապահովումը, ինչպես նաև՝ ՀՀ օրենքներով նախատեսված այլ խնդիրներ:

Ի՞նչ են անում խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց առջև դրված խնդիրների լուծման համար

Խնամակալության և հոգաբարձության մարմինները ՀՀ օրենքով սահմանված դեպքերում սահմանում են խնամակալություն՝ 14 տարին չլրացած անչափահասների և հոգաբարձություն՝ 14-18 տարեկան անչափահասների նկատմամբ:

Իրականացնում են՝

- երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու, ինչպես նաև՝ ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում.
- համայնքի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառումը.
- խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունները՝ մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը.
- հսկողություն խնամակալների և հոգաբարձուների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ մշտադիտարկումների միջոցով.
- վերահսկողություն խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ, այդ թվում՝ մշտադիտարկումների միջոցով.
- երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն և այլ գործառույթներ:

Ապահովում են՝

- ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքը՝ ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում.
- երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման (կենսաբանական ընտանիք վերադարձնելը կամ այլընտրանքային խնամքի) հարցի լուծումը:

Թույլատրում են՝

- հոգաբարձուին 16 տարին լրացած խնամարկյալից առանձին ապրել,
- ծնողական սահմանափակված իրավունքներով ծնողներին երեխայի հետ շփումը.
- խնամակալին կնքել, իսկ հոգաբարձուին՝ համաձայնություն տալ կնքելու խնամարկյալի գույքի օտարման, գույքը գրավ դնելու գործարքներ, ինչպես նաև՝ վարձակալության, այդ գույքն անհատույց օգտագործման հանձնելու գործարքներ:

Բացահայտում են՝

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկությունները.
- ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքերը և ապահովում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը.
- համայնքներում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև՝ երեխաների մահացության դեպքերը և դրա մասին իրազեկում մարզպետին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին), միաժամանակ նախաձեռնում դրանց պետական գրանցման գործընթացը:

Հաշվի են առնում՝

- 10 տարին լրացած երեխայի կարծիքը՝ նրա իրավունքներին և շահերին առնչվող ցանկացած հարց քննարկելիս և որոշում կայացնելիս, երեխային վերաբերող բոլոր հարցերում պատշաճ ուշադրության են արժանացնում իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համոզմունքներն ու կարծիքը՝ նրա տարիքին և հասունությանը համապատասխան:

  (Երեխայի լսված լինելու իրավունքը քննարկելիս արդեն նշել ենք, որ 10 տարեկանը՝ որպես լսված լինելու իրավունքի իրացման տարիքային սահմանափակում, անթույլատրելի է, և Հայաստանի Հանրապետության երեխայի իրավունքներին վերաբերող իրավական ակտերում, տարիքային սահմանափակումները բացառելու նպատակով, արվել ու արվում են համապատասխան փոփոխություններ ու լրացումներ):

Իրազեկում են՝

- ՀՀ ոստիկանությանը համայնքներում երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի մասին:

Ընտրում են՝

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքներում տեղավորելու ձևերը:

Դատարանում մասնակցում են՝

- երեխաների որդեգրման հաստատմանը և որդեգրման վերացմանը վերաբերող գործերի քննությանը.
- երեխայից առանձին ապրող ծնողի ծնողական իրավունքների իրականացման հարցում ծագած կամ երեխայի դաստիարակության հետ կապված վեճերը քննող դատական նիստերին, դատարանում ծնողական իրավունքների սահմանափակման, ծնողական իրավունքների զրկելու, ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերի քննությանը, 16 տարեկան դարձած անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու մասին գործերի քննմանը.
- երեխաների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի դատաքննությանը.
- քրեական վարույթում՝ որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ:

Աջակցում են՝

- խնամատար ընտանիքին, երեխային խնամատար ընտանիքում ինտեգրվելուն, ինչպես նաև՝ երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու գործընթացին.
- խնամակալներին ու հոգաբարձուներին՝ խնամարկյալների խնամքի և դաստիարակության, նրանց հանգիստը կազմակերպելու գործում.
- երեխային մանկավարժահոգեբանական կենտրոն ուղղորդելուն:

Այնուհետև՝

- քննության են առնում խնամակալների և հոգաբարձուների գործողությունների կամ անգործության մասին դիմումներն ու բողոքները.
- լուծում են ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները.
- քննարկում են ընտանիքի, կանանց և երեխաների վերաբերյալ առկա հիմնախնդիրները.
- կատարում են համայնքում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության վիճակի ընդհանուր մշտադիտարկում.
- հայտնաբերում են համայնքում բնակվող այն ընտանիքները, որոնցում առկա է երեխայի իրավունքների կամ շահերի խախտման վտանգ, և կատարում այդ ընտանիքներում ապրող երեխաների իրավիճակի հատուկ մշտադիտարկում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալության կամ բաժնի, հանրակրթական ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, ինչպես նաև՝ ՀՀ մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, ընդ որում՝ մշտադիտարկման ժամկետները և հաճախականությունը սահմանվում են ըստ կարիքի՝ ելնելով իրավիճակից, որի մասին ամեն երեխայի համար ընդունվում է առանձին որոշում, իսկ դրանց արդյունքները, ըստ անհրաժեշտության, կարող են ներկայացվել և քննարկվել երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովում.
- իրականացնում են աշխատանքներ երեխաների իրավունքների խախտումները և շահերի ոտնահարումները կանխարգելելու նպատակով՝ երեխաների ու ծնողների հետ, ինչպես նաև խնամք տրամադրող ու կրթական հաստատություններում իրազեկող հանդիպումների և միջոցառումների կազմակերպման ու անցկացման միջոցով՝ համագործակցելով այլ պետական կառույցների հետ.
- դատարան են ներկայացնում երեխայի ու նրա դաստիարակությանը հավակնող անձի կյանքի հետազոտության ակտը և, դրա հիման վրա, վեճի էության մասին եզրակացությունը.
- օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում են խնամակալների ու հոգաբարձուների, խնամակալին կամ հոգաբարձուին ազատում են իր պարտականությունների կատարումից.
- երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում երեխային վերցնում են ծնողներից կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, անհապաղ ապահովում են երեխայի ժամանակավոր տեղավորումը և 7-օրյա ժամկետում դիմում դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով.
- դիմում են դատարան 14-18 տարեկան երեխայի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը սահմանափակելու կամ նրան այդ իրավունքից զրկելու միջնորդությամբ.
- կարգավորում են անչափահաս ծնողների և երեխայի խնամակալի միջև առաջացած տարաձայնությունները.
- մերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների կամ նրանցից մեկի մերժման դեպքում կարող են պարտավորեցնել ծնողներին կամ նրանցից մեկին չխանգարելու այդ շփմանը.
- երեխայի այլընտրանքային խնամքի հետ կապված ընդունում են որոշումներ, տալիս եզրակացություններ.
- իրականացնում են ՀՀ օրենքներով իրենց վերապահված այլ լիազորություններ:

Բառարան

Ազգային հանձնաժողով

Մարմին, որը կազմված է հանձնաժողովի նախագահից, անդամներից և քարտուղարից: Ազգային հանձնաժողովի աշխատանքները համակարգվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Ազգային հանձնաժողովի նախագահը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն է, իսկ քարտուղարը՝ նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են ներկայացուցիչներ ՀՀ առողջապահության նախարարությունից, ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ ֆինանսների նախարարությունից, ՀՀ կառավարության աշխատակազմից, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունից և այլ պետական մարմիններից: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են նաև մի շարք միջազգային և տեղական հասարակական կառույցներ:

Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժին

Մարմին, որը բաղկացած է բաժնի պետից և 5 աշխատողներից՝ իրավաբան, մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող կամ սոցիալական մանկավարժ կամ առողջապահության մասնագետ:

Օգտակար հղումներ

ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին»՝
www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69115

ՀՀ օրենքը «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին»՝
www.arlis.am/DocumentView.aspx?docid=67166

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կանոնադրություն՝
www.arlis.am/DocumentView.aspx?docid=80400

Հայաստանի Հանրապետության մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրություն՝
www.arlis.am/DocumentView.aspx?docid=102686

©UNICEF Armenia/2020/Mahari

7. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի մշտադիտարկումը և Մարդու իրավունքների պաշտպանի իրավասությունը

Մշտադիտարկում ասելով՝ հասկանում ենք իրավիճակի պլանավորված, համակարգված, հաստատված կարգով իրականացվող ուսումնասիրություն, որն ուղղված է իրավիճակի դրական փոփոխությանը:

Մշտադիտարկվում են երեխաների իրավունքների իրացման ընթացքում ծագած խնդիրները, երեխաների հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման և դրանց իրականացման գործընթացը, երեխաների շահերի պաշտպանության համար պատասխանատու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և այդ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների աշխատանքները, ուսումնասիրվում են նրանց ներկայացրած դիմումներն ու առաջարկությունները, մշակվում են խնդիրների լուծման առաջարկներ: Օրինակ՝ առաջարկվում է ավելացնել առողջապահության, կրթության, երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման համար հատկացվող գումարները, ծրագրային բյուջետավորման գործընթացում որպես ցուցանիշ կարևորել երեխայի իրավունքների պաշտպանությունը և ապահովել համապատասխան մեթոդական ցուցումներ, մշակել երեխաներին ուղղված ծախսերի վերլուծության մեթոդաբանությունը՝ հնարավորություն ընձեռնելով տեսնելու պետական բյուջեից երեխաներին հատկացվող ո¬ւղղակի ու անուղղակի ծախսերը և ապահովելով պետական ծախսերի արդյունավետությունը, արդարությունն ու թափանցիկությունը, իրականացնել միջոցառումներ, որոնք ուղղված են հանրությանը, մասնավորապես՝ երեխաներին, զանգվածային լրատվամիջոցներով և դպրոցներում իրականացվող բացատրական զրույցների միջոցով իրազեկելու Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին անհատական բողոքներ ներկայացնելու մեխանիզմի վերաբերյալ:

Մշտադիտարկման արդյունքում կազմվում է տարեկան զեկույց, որտեղ ներառվում են հիմնախնդիրների վերաբերյալ բողոքները:

Մշտադիտարկումն իրականացվում է թե՛ միջազգային և թե՛ տեղական մակարդակում: Միջազգային մակարդակում այն իրականացվում և վերահսկվում է Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կենսագործումը վերահսկելու նպատակով Կոմիտեն դիտարկում է մասնակից պետությունների ներկայացրած պարբերական զեկույցները, անհատական գանգատներն ու միջպետական հաղորդակցությունները և ընդունում ընդհանուր մեկնաբանություններ:

Զեկույցներում նշվում են նաև այն գործոններն ու դժվարությունները, որոնք ազդում են Կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վրա: Անհրաժեշտության դեպքում, Կոմիտեն կարող է պահանջել պետությունից լրացուցիչ տեղեկությունների տրամադրում:

Այլընտրանքային զեկույցները ներկայացվում են ոչ կառավարական, ոչ պետական, հասարակական, մասնագիտացված կազմակերպությունների, օմբուդսմենների, անհատների, երեխաների կամ այլ խմբերի կողմից: Այլընտրանքային զեկույցները պետք է պարունակեն տեղեկություններ Կոնվենցիայով և կից արձանագրություններով ամրագրված իրավունքների կատարման ուղղությամբ պետության ձեռնարկած միջոցառումների և այդ իրավունքների իրականացման մասին:

Զեկույցներն ուսումնասիրելիս Կոմիտեն ակտիվորեն համագործակցում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի այլ կառույցների, ինչպես նաև՝ այլ միջազգային և ազգային մասնագիտացված կառույցների հետ և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնում իրավիճակի բարելավման և առկա խնդիրների լուծմանն ուղղված դիտարկումներ ու առաջարկություններ:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկումն ազգային մակարդակում իրականացնում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը:

Պաշտպանի կողմից Կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկումն իրականացվում է թե՛ Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների ընդհանուր վիճակի մշտադիտարկման, թե՛ անհատական բողոքների քննարկման միջոցով: Կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման նպատակով Պաշտպանն իրավասու է՝

- իրականացնելու պարբերական և ըստ անհրաժեշտության այցեր երեխաների խնամք ու պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև՝ հանրակրթական ուսումնական հաստատություններ: Պաշտպանը պարտավոր չէ նախապես տեղեկացնել այցերի ժամանակի և նպատակի մասին.

- հանդես գալու երեխայի իրավունքներին առնչվող արտահերթ հրապարակային զեկույցներով և հաղորդումներով.
- ներկայացնելու առաջարկություններ իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ.
- մասնակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին.
- քննարկման ընդունելու անհատական բողոքներ, ինչպես նաև՝ սեփական նախաձեռնությամբ սկսելու քննարկման ընթացակարգ:

Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանն Ազգային ժողով է ներկայացնում տարեկան հաղորդում, որը պարունակում է համապարփակ տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: Երեխայի իրավունքների կոպիտ խախտումների կամ հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ նաև արտահերթ հրապարակային զեկույցներով կամ հաղորդումներով:

Պաշտպանը կարող է իրավասու մարմիններին ներկայացնել գրավոր կարծիք՝ երեխայի իրավունքներին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ: Բացի այդ՝ բոլոր այն դեպքերում, երբ Պաշտպանն իր գործունեության ընթացքում պարզում է, որ երեխայի իրավունքներին առնչվող հարցերն օրենքով կամ որևէ այլ իրավական ակտով կարգավորված չեն կամ ունեն ոչ լիարժեք կարգավորում, Պաշտպանը կարող է իրավասու մարմին ներկայացնել համապատասխան իրավական ակտը փոփոխելու կամ լրացնելու վերաբերյալ առաջարկություն: Պաշտպանն իրավունք ունի նաև դիմելու Սահմանադրական դատարան իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցերով:

Պաշտպանը կարող է մասնակցել ՀՀ կառավարության, Ազգային Ժողովի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին: Պաշտպանն իր կարգավիճակով չի կարող ելույթ ունենալ դատական նիստերի ընթացքում և իրավասու չէ միջամտելու դատական վարույթին կամ դատավորների լիազորությունների իրականացմանը կոնկրետ գործով, սակայն կարող է դիտարկման նպատակով ներկա լինել դռնբաց դատական նիստերին:

Պաշտպանը կարող է սեփական նախաձեռնությամբ քննարկել՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից երեխայի՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների խախտումները.
- հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից երեխայի իրավունքների խախտման վերաբերյալ հարցերը, եթե տեղեկություն կա երեխայի իրավունքների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի հանրային նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք չեն կարող ինքնուրույն օգտագործել իրենց իրավունքների պաշտպանության իրավական միջոցները:

Երեխայի կամ երեխաների իրավունքների ենթադրյալ խախտման դեպքի մասին Պաշտպանին կարող է դիմել ցանկացած անձ, այդ թվում՝ երեխան անձամբ՝ առանց տարիքային սահմանափակման:

Ինչպե՞ս դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին երեխայի կամ երեխաների իրավունքների հնարավոր խախտման դեպքում:

(«Մարդու իրավունքների պաշտպանի» մասին ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 16, 17)

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի, կամ հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպության կամ դրա ներկայացուցչի, կամ պետության կողմից պատվիրակված լիազորություն իրականացնող կազմակերպության կամ դրա պաշտոնատար անձի կողմից, երեխայի կամ երեխաների իրավունքների հնարավոր խախտման դեպքերի մասին Պաշտպանին կարող է դիմել ցանկացած անձ, այդ թվում՝ երեխան անձամբ, կամ երեխայի ծնողները կամ օրինական ներկայացուցիչները, կամ երեխայի հետ աշխատող անձինք, կամ հասարակական կազմակերպությունը, եթե կա անձի գրավոր համաձայնությունը:

Բողոքը կարող է ներկայացվել՝

- գրավոր կարգով՝ (1) փոստով, կամ (2) պաշտպանին կամ պաշտպանի աշխատակազմ դիմումն առձեռն հանձնելով, կամ (3) էլեկտրոնային փոստով, կամ (4) առցանց դիմելով.
- բանավոր կարգով՝ (1) այցելելով պաշտպանի աշխատակազմի գրասենյակ կամ (2) զանգահարելով պաշտպանի աշխատակազմ կամ կապ հաստատելով թեժ գծի միջոցով:

Բողոքի համար որևէ հատուկ ձև սահմանված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն բողոք ներկայացնող անձի՝

- անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հետադարձ կապի տվյալները.
- իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, հետադարձ կապի տվյալները:

Բողոքը պետք է լինի ստորագրված: Անանուն բողոքները չեն քննարկվում: Բողոքում պետք է նշվեն՝

- երեխայի կամ երեխաների խախտված կամ խախտվող իրավունքի կամ իրավունքների մասին տեղեկությունները.
- գործի պարզաբանման և լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

Օգտակար հղումներ

ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից 2017թ. հուլիսի 13-ի N 30 քաղվածք «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին»՝ www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114901

Բողոքը պետք է ներկայացվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների կամ ազատությունների ենթադրյալ խախտման մասին: Բողոք հասցեագրելու համար պետական տուրք նախատեսված չէ:

Բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում պաշտպանը կարող է անարգել այցելել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպություն, ինչպես նաև՝ պահանջել և ստանալ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ, եզրակացություններ և այլն: Քննարկելով բողոքը և հայտնաբերելով խախտում՝ Պաշտպանն առաջարկում է տվյալ խախտումը կատարած մարմնին կամ պաշտոնատար անձին վերացնել թույլ տրված խախտումները՝ նշելով խախտված իրավունքների վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումները: Պաշտպանն իրավասու է առաջարկելու իրավասու պետական մարմիններին կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել այն պաշտոնատար անձին, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել է երեխայի իրավունքը: Պատասխանատվության ենթարկելու առաջարկի հետ մեկտեղ Պաշտպանը կարող է առաջարկել կարգապահական տույժի տեսակը: Պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է քննարկել Պաշտպանի առաջարկը և արդյունքների մասին տեղեկացնել Պաշտպանին: Պաշտպանի առաջարկած կարգապահական տույժի տեսակը չընտրելու կամ անձին կարգապահական պատասխանատվության չենթարկելու դեպքում իրավասու պաշտոնատար անձը պարտավոր է Պաշտպանին ներկայացնել համապատասխան հիմնավորում: Հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպության կողմից երեխայի իրավունքների կամ ազատությունների խախտում հայտնաբերելու դեպքում, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, Պաշտպանը կարող է պատասխանատվության ենթարկելու առաջարկով դիմել իրավասու վարչական մարմիններին:

Ի՞նչ այլ մարմիններ կարող են մշտադիտարկումներ իրականացնել ազգային մակարդակում

Ազգային մակարդակում անկախ մշտադիտարկումներ են իրականացնում նաև մի շարք միջազգային և հասարակական կազմակերպություններ, այդ թվում՝ ՅՈՒՆԻՍԵՖը:

©UNICEF Armenia/2019/Gevorgyan-Publicis Hepta

Կարևոր հեռախոսահամարներ

Երեխաների պաշտպանության հարցերով թեժ գիծ	080 061 111 044 086 111
Մասնագիտական աջակցության հեռախոսահամար սոցիալական ոլորտի աշխատուժի համար	055 086 111
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի թեժ գիծ	116
ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն	010 550 601
ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ	80 03
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թեժ գիծ	114

Մարդու իրավունքների պաշտպանի՝ երեխաների համար ստեղծված կայքէջ children.ombuds.am

unicef
յուրաքանչյուր
երեխայի համար